Աստանայից ցորեն մատակարող ընկերությունը սկանդալային բացահայտում է արել. «Հայկական շուկա հացահատիկի առաջին մատակարարման համար Продкорпорация-ն առաջարկել է տարբեր որակի ցորեն, այդ թվում՝ բարձր սպիտակուցային hi-pro՝ 27-28% գլյուտենի պարունակությամբ, սակայն հաճախորդը նախընտրել է 4-րդ կարգի ցորենը»:

Կարդացեք՝ էջ 4

Գուցե իրո՞ք Կոռնիձորի դիրքում, որը վաղուց մերը չէ, ներթափանցման փորձ է եղել, դիվերսիա, որը հայկական կողմը պետք է թաքցներ: Սա վարկած է, գրեթե անհավանական, բայց այլ կերպ հնարավոր չէ բացատրել ո՛չ երեք զինծառայողի սպանությունը, ո՛չ էլ մեղադրվողներին այսքան երկար՝ անարդար ձեւով կալանավայրում պահելը:

Կարդացեք՝ էջ 6



Փաշինյանի ողջ իրավապահ համակարգը կես տարում կարողացել է Եկեղեցու հազարավոր սպասավորներից ընդամենը մեկ տասնյակի դեմ կոմպրոմատ գտնել եւ շանտաժով նրանց գործակցություն պարտադրել: Դա խոսում է Հայաստանյայց առաքելական եկեղեցու սպասավորների նախանձելի բարեպաշտության, օրինավորության եւ անխոցելիության մասին:

Կարդացեք՝ էջ 8


# Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 196 (4098), 4 դեկտեմբեր, հինգշաբթի, 2025

www.hraparak.am




Այր Աթոռը հայտարարել է, որ դեկտեմբերի 10-12-ը Եպիսկոպոսաց ժողով կկայանա, որին կմասնակցեն ոչ միայն հայաստանյան տարածքում ծառայություն մատուցող եպիսկոպոսները, այլեւ՝ բոլոր թեմերի: Սակայն դեռ չեն գաղտնազերծում ժողովի օրակարգը՝ արդյո՞ք կդադարեցվի տիրադավ 10 եպիսկոպոսների պաշտոնավարումը, կդրվի կոչումներից զրկելու հարցը: Հիշեցնենք, որ նման հորդորով են հանդես եկել Միքայել եւ Բագրատ արքեպիսկոպոսները: Մեր տեղեկություններով, Փաշինյանի հետ նրանց հանդիպումից հետո Այր Աթոռում պատժի տարբերակներ են քննարկել, բայց վերջնական որոշման չեն հանգել՝ ելնելով մի շարք հանգամանքներից: Օրինակ, առաջարկել են ոչ թե կարգալույծ անել այդ հոգեւորականներին, այլ պաշտոնաթող անել, թեմական առաջնորդությունից զրկել, սակայն, հաշվի առնելով Հովհաննավանքի նախադեպը, երբ իրավապահներով ապահովում են վանքի զավթումն ու պահպանում կարգալույծ քահանային, կարծիք է հնչել, որ սրանց դեպքում էլ իշխանությունը կխրախուսի ապօրինությունը, եւ կարգալույծ եպիսկոպոսները դուրս չեն գա առաջնորդարաններից: Առաջարկել են Վեհարանի տեսուչին կամ ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի նախկին դեկանին պաշտոնազրկել, սակայն դա էլ կնշանակի նույն հանցանքին ընտրովի մոտեցում ցուցաբերել, ուստի որոշել են հարցը թողնել Եպիսկոպոսաց ժողովի քննությանը: Բարձրաստիճան հոգեւոր դասը կողմ է կոշտ պատիժներին: Ասում են՝ դանակը ոսկորին է հասել. իշխանությունը խախտել է բոլոր կարմիր գծերը, ներողամտության տեղ չի թողել:

Նիկոլ Փաշինյանը Վեհափառի եւ եկեղեցու դեմ պայքարի մարտավարությունը փոխել է՝ խաչակրաց արշավանքը տեղափոխել է ներեկեղեցական տիրույթ՝ ներսից է քանդում եկեղեցին: Իշխանական աղբյուրներից տեղեկացանք, որ սցենարը հետեւյալն է. եպիսկոպոսաց դասից էլի ինչ-որ անձանց իրենց կողմը բերել, այնուհետ պարտադրել Վեհափառի հրաժարականը: Այսօր ընդամենը 10 բարձրաստիճան հոգեւորական է միացել, մի քանի քահանաներ: Իշխանական աղբյուրները վստահեցնում են, որ առաջիկա օրերին 2-3 նոր անուն կլսենք: Սակայն պահանջվում է գոնե մոտ 25 բարձրաստիճան հոգեւորականի աջակցություն: Ի դեպ, անգամ այդ պարագայում չեն կարող երազել Վեհափառի գահընկեցության մասին, քանի որ, եկեղեցական կանոնակարգով, այդ հարցը քննարկում է Եպիսկոպոսաց ժողովը, իսկ ժողովը հրավիրելու իրավասությունը կաթողիկոսինն է: Եվ եթե Վեհափառը որոշի դիմադրել ու չհեռանալ կամ եթե վստահ լինի, որ ժողովի մեծամասնությունն իր դեմ է, ժողով էլ չի հրավիրի:

## Աղետներից ծնված աճ

Երեկ՝ Արցախի հետ կապված բանակցային փաթեթի հրապարակումով, այսօր՝ ԱԺ-ում ելույթով, ըստ էության, Նիկոլ Փաշինյանը մի բան էր փորձում համոզել հանրությանը. ես մեղք չունեմ, որ Արցախը հանձնվել է, ես ճիշտ եմ կառավարում երկիրը, կատարում եմ իմ նախընտրական խոստումները, եւ դրա վկայությունն է այն, որ բյուջեն կատարվում է, 7 տոկոսից ավելի տնտեսական աճ ունենք եւ այլն, եւ այլն: Բայց իր բերած փաստարկներին ի պատասխան՝ հարյուրավոր հակափաստարկներ կարելի է բերել, որոնք կվկայեն այն մասին, որ իրենք երկրի կառավարումը հիմնովին ձախողել են, եւ ոչ մի փաստաթուղթ ու ոչ մի թիվ չի կարող մեզ հակառակում համոզել: Արցախի հարցում այն բոլոր հանցավոր քայլերն ու անմեղսունակությունը, որ դրսեւորել են 2018 թվականից սկսած, հիմնովին հերքում են այն արդարացումները, թե «նախկիններն էին հանձնել Արցախը»: Անիմաստ է դրանց անդրադառնալը՝ այդ մասին շատ է խոսվել: Ինչ վերաբերում է ներքաղաքական կյանքում, տնտեսության մեջ արձանագրած «շռնդալից» հաջողություններին. մարդկանց եկամուտների եւ միջին աշխատավարձերի, անշարժ գույքի գործարքների, կենսաթոշակառուների քանակի եւ աշխատատեղերի աճին, ապա մի պահ պատկերացրեք՝ ինչպիսին կլինեին այդ թվերը, եթե չսկսվեր ռուս-ուկրաինական պատերազմը, եւ աշխատող, հարկ վճարող, ՀՀ բանկային ու այլ ծառայություններից օգտվողների նման մեծ հոսք չժամաներ Հայաստան: Եկեք նաեւ պատկերացնենք՝ եթե 120 հազար արցախցի չտեղափոխվեր հայրենիք, աշխատատեղերի, անշարժ գույքի վաճառքի աճ կլինե՞ր արդյոք: Նաեւ պատկերացնենք՝ եթե 7 միլիարդ դոլարի պետական պարտքը չվերցնեին, Արցախին ամեն տարի ուղղվող միջոցները շարունակեին ՀՀ բյուջեից դուրս գալ, ինչ պատկեր կլիներ: Այնպես որ, այս «աճն» էլ է ապացուցում, որ երկրի կառավարումը ձախողել են:

*Տեւական ընդմիջումից հետո երեկ Գյումրու ավագանին նիստ արեց՝ ապահովելով ավագանու բնականոն ընթացքը: Կալանավորված Վարդան Ղուկասյանի ցուցակից մանդատ ստացավ փոխքաղաքապետի գործավար Սիրանուշ Մելիքյանը: Ղուկասյանի կալանավորումից հետո իշխանությունը հետեւողականորեն աշխատում էր ցուցակի հաջորդ թեկնածուների վրա, որ թափուր մանդատները չվերցնեն, ճգնաժամ առաջանա, եւ իշխանությունը զավթելու հնարավորություն ստանան: Ցուցակում ընդգրկված գործարար եղբայրներին կալանավորեցին, մյուսների վրա էին աշխատում, սակայն Սիրանուշ Մելիքյանը չի հանձնվել: Տեղեկություններ կան, որ ՔՊ-ն մինչեւ փետրվար ուզում է զավթել Գյումրիում իշխանությունը:*

## ԵՎՐՈՊԱՆ ԱՅԼԵՎՍ ՉԻ ԹԱՔՑՆՈՒՄ ԻՐ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Արարատ Միրզոյանը Բրյուսելում ԵՄ պաշտոնյաների հետ նոր համագործակցության փաստաթուղթ ստորագրեց: Միրզոյանը հանդիպել էր ԵՄ ընդլայնման հարցերով հանձնակատար Մարթա Կոսի հետ, որը հայտարարել էր, թե Ռուսաստանն ու իր արբանյակները, ԱԺ ընտրություններին ընդառաջ, Հայաստանում ապատեղեկատվական արշավ են իրականացնում, եւ այդ մարտահրավերը հաղթահարելու համար ԵՄ-ն 15 միլիոն եվրո է տրամադրելու: «Մենք տեսնում ենք նույն ցանցերը, որ օգտագործվել են Մոլդովայում, այսինքն՝ սցենարը նույնն է, ԵՄ ֆինանսավորումը կօգնի հայտնաբերել ու արձագանքել նման ազդեցություններին»,- ասել է ԵՄ դիվանագիտության ղեկավար Կայա Կալլասը: Արեւմուտքն արդեն անթաքույց հայտարարում է, որ մտադիր է աջակցել ՔՊ-ի վերարտադրությանը՝ կիրառելով Մոլդովայի սցենարը եւ ընտրական մանիպուլյացիաներով ամրագրելով Փաշինյանի հաղթանակը: ՔՊ-ականներն արդեն փորձի փոխանակում են անում Մոլդովայի գործընկերների հետ: ՔՊ քարոզչական գծի պատասխանատու Վահագն Ալեքսանյանն է Մոլդովայում: Երեկ նա տեղեկացրեց, որ խորհրդարանում արդյունավետ քննարկում է ունեցել փոխնախագահ Դոյնա Գերմանի հետ: «Քննարկեցինք հիբրիդային սպառնալիքների նկատմամբ դիմակայունության ամրապնդման ուղղությամբ համագործակցության հնարավորությունները»: Ասում են, որ Փաշինյանի վերջին հայտարարությունը, թե էթիկայի կանոնագիրք են ընդունել եւ որոշել են այլեւս չհայհոյել, նույնպես ԵՄ պահանջն է: ԵՄ-ում շատ վատ են վերաբերվել Փաշինյանի՝ «դոմփելու», իր սեռական օրգանը ցուցադրելու գրառումներին, որոնք մեծ տարածում են գտել միջազգային մամուլում, եւ նրան խիստ նկատողություն են արել ու զգուշացրել, որ բարեվարքության տարրական կողմը պետք է պահի: Բայց կարող է ռեալ գործողություններով պայքարել ընդդիմադիրների դեմ, դրան չեն խանգարի:

ՆԱԽԱԳԻԾ

# ՄԱՐՏՈՒՆԻՆ ԱՐԱՐԱՏԻ ՀԵ՞Տ ԵՔ ՄԻԱՅՆՈՒՄ, ԹԵ՞ ՆՈՐ ԶԻՋՈՒՄՆԵՐԻ ԵՔ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2021-ի սկզբին Գորիս-Կապան մայրուղին Ադրբեջանին հանձնելուց հետո զիջումների ընթացքը կանգնեցնել այլեւս չհաջողվեց, մինչեւ հերթական զիջումը՝ արդեն Տավուշի մարզից: Կիրանցի հատվածում ստիպված եղան Կիրանց-Ոսկեպար այլընտրանքային ճանապարհ կառուցել եւ ձեւացնել, թե սահմանային սպիտակ սյուներն ու Կիրանցի պատը հրաշք ձեռքբերում են՝ խաղաղության ամուր գրավական: Կիրանցի հետ կապված աղմուկը մարելու նպատակով 2023-ի այդ օրերին մեզ հավատացնում էին, թե սահմանազատումը միայն հողերի հանձնում չի նշանակում, մեր հողերից էլ կան Ադրբեջանի տնօրինության տակ, եւ շուտով այդ հողերը մեզ են հանձնելու: Սակայն Ադրբեջանը մեկ անգամ չէ, որ հայտարարել է՝ իր տնօրինած տարածքներից որեւէ բան հետ չի տալու, անգամ եթե աշխարհի բոլոր քարտեզներով ապացուցվի, որ դրանք հայկական հողեր են:

Արդյունքում՝ Հայաստանը միայն կորցրեց տարածքներ, չստանալով ոչինչ: Օրեր առաջ Փաշինյանը կառավարության նիստում հայտնեց, որ Արարատի մարզի Ուրցաձոր բնակավայրից դեպի Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք նախատեսվում է կառուցել նոր ավտոճանապարհ, որն ուղիղ կմիացնի երկու մարզերը: Նրա խոսքով՝ Արարատն ու Գեղարքունիքը միմյանց հետ կապվում են միայն Վայոց Ձորի, Կոտայքի կամ Երեւանի միջոցով, ինչը երկարացնում է ճանապարհը եւ արգելակում տնտեսական ու զբոսաշրջային համագործակցությունը: Նշել էր նաեւ, որ նոր ավտոճանապարհն էապես կակտիվացնի երկու մարզերի տնտեսական կյանքը, իսկ ճանապարհի ողջ ուղին ու վերջնակետերը զբոսաշրջային մեծ ներուժ ունեն: Վստահ ենք՝ վարչապետը շատ լավ գիտի, որ 2 մարզերն իրար կապող ճանապարհ կա, եւ այն դեռ սովետական տարիներին է կառուցվել, իսկ ոչն է նոր ճանապարհի կառուցման նպատակը. դա է հարցը: Սա շատ նման է նրան, որ Տիգրանաշենի հանձնման համար հող նախապատրաստելիս Փաշինյանն ասում էր. «Արծվաշենը հետ ենք բերելու»:

ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր **Արման Ղազարյանը** մեզ հետ զրույցում ասաց, որ Մարտունուց ուղիղ ճանապարհ կա դեպի Արարատի մարզ: Իսկ հիմա այդ ճանապարհը երթեւեկելի՞ է: «Իհարկե, Սելիմի լեռնանցքով իջնում ենք, խաչմերուկ կա, ձախով գնում ենք դեպի Ջերմուկ, աջով՝ ճանապարհը տանում է դեպի Պարույր Սեւակ: Ժամանակին Մարտունին խիտ բնակեցված լինելու պատճառով շատերը տեղափոխվել են Վեդի, Արտաշատ: Իրականում բարեկամական կապը կա, այդ ճանապարհը կա, մենք հիմա այդ ճանապարհով ենք գնում-գալիս: Եթե ուզում են շրջանցիկ ճանապարհ կառուցել, դա արդեն ուրիշ հարց է: Ես մինչեւ նախագծային առաջարկը չտեսնեմ, չեմ կարող ասել՝ ինչ են ուզում անել, բայց մի բան փաստ է, որ սրանք ուրիշ բան ասում են, տակը ուրիշ բան կա»:

Արդյո՞ք այդ ճանապարհի կառուցումը կնշանակի հերթական զիջում մեր տարածքներից, եւ սա նաեւ նշանակո՞ւմ է, որ միջպետական ամենակարեւոր ճանապարհն է վտանգված: Փորձեցինք այս հարցի շուրջ զրուցել Մարտունու ՔՊ-ական համայնքապետ Հովհաննես Հովեյանի հետ, սակայն մեր զանգերը մնացին անպատասխան: Համայնքապետի խորհրդական **Հուսիկ Սիմոնյանին** հարցրինք, թե ինչ ճանապարհի մասին է խոսքը: «Երկու մարզերը կապող ճանապարհ չկա, այդ ճանապարհը եղել է 50-ական թվականներին, անձրեւային ջրերն ավելի են վնասել, չի գործում: Նախկինում եղել է, դա լեռնամիջյան ճանապարհ է, սելի ճամփա է եղել: Ճանապարհը չի գործում, դա ապատեղեկատվություն է, ես հստակ ասում եմ: Ծրագիրն անում են կառավարությունն ու ճանապարհային դեպարտամենտը՝ պետական գումարներով: Մանրամասներ չենք կարող տրամադրել, քանի որ մենք էլ չունենք: Համայնքի բյուջեից որեւէ լումա չի դրվելու այդ ծրագրի վրա: Գիտեմ, որ Ուրցաձորից այդ ճանապարհը գալիս հատվում է Սելիմի լեռնանցքին, թե քանի կմ է, նախագծային արժեքը որքան է կազմում, այդ տվյալները մենք չունենք»: Խոսքը Տիգրանաշենի ոլորանների՞ մասին է: «Չէ, Քյարքին Արարատի մարզում է, ի՞նչ կապ ունի Մարտունու հետ, նոր ճանապարհ են կառուցում, որը 50%-ով կրճատում է ճանապարհը»:

Ի՞նչ ճանապարհ է կառուցվում, արդյո՞ք այդ ճանապարհի կառուցումը կնշանակի հերթական զիջում. նույն հարցն ուղղեցինք Գեղարքունիքի մարզպետի տեղակալ **Վահան Զարոյանին**: «Դա Գեղարքունիքն ու Արարատի մարզը կապող ճանապարհ է, որի նախագիծն արդեն պատրաստ է»: Կարծիք կա, որ Փաշինյանն այս ճանապարհի կառուցմամբ նորից մի բան զիջում է, այս ճանապարհը կապ ունի՞ Տիգրանաշենի հետ: «Ճանապարհի կառուցման հետ կապված խոսակցությունը շատ վաղուց է՝ 2019 թվականից, դա ընդհանրապես կապ չունի, ու Ձեր ասած, որ պարոն Փաշինյանը մի բան կառուցում է, ինչ-որ բան հանձնում է, դա ուղղակի ճիշտ ձեւակերպում չէ: Ճանապարհի հետ կապված այլ մանրամասներ չեմ կարող հայտնել»: Տավուշում այլընտրանքային ճանապարհ կառուցեցին՝ զիջեցին, Սյունիքում՝ նույնպես, հիմա էլ՝ սա: «Վարչապետ Փաշինյանը ոչինչ չի հանձնել»: Իսկ ո՞վ է հանձնել: «Դա հանձնել չի, մենք արել ենք այն ամենը, ինչը որ վերաբերում է իրական Հայաստանին»: Լավ, բայց ինչպե՞ս է ստացվում, որ իրական Հայաստանից անընդհատ ինչ-որ բան ենք զիջում, իսկ, օրինակ, որեւէ հայկական տարածք Ադրբեջանից չենք պահանջում, Ադրբեջանը չի զիջում: «Հայաստանից տարածքներ չեն զիջվել»: Տավուշում տարածք չի՞ զիջվել եւ մի հսկա «անվտանգ» պատ չի՞ կառուցվել: «Դա Ադրբեջանի տարածքն է եղել, մնացել է Ադրբեջանին, որը որ Հայաստանի տարածքն է եղել, մնացել է Հայաստանին»,- ասաց բացի իր աթոռից ամեն ինչ զիջելու հետ համաձայն փոխմարզպետը:

# ՈՒՆԵՆԱԼՈՒ ԷԻՆՔ ՂԱՐԱԲԱՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌՈՒՄՈՎ ՃԱՆԱՉՎԱԾ, ԵՐԱՇԽԻՔՆԵՐՈՎ

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կառավարության կայքէջում նախօրեին հրապարակվել են ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացին առնչվող մի շարք փաստաթղթեր: Ինչպես նշված է այդ փաստաթղթերին կից, դրանք պատկերացում են տալիս մինչեւ 2020 թվականը տեղի ունեցած բանակցային գործընթացի բովանդակության մասին: Հրապարակված փաստաթղթերի թվում են ԵԱՀԿ ՄԽ առաջարկները (2016թ.) 2019 թ., Կրակովի փաստաթուղթը, երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի նամակը Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինին (օգոստոս, 2016թ.), Կազանի փաստաթուղթը, ՌԴ փաթեթային առաջարկները, Մադրիդյան սկզբունքները, Մեղրիի եւ Ղարաբաղի փոխանակման տարբերակը, ԵԱՀԿ ՄԽ համապարփակ առաջարկները, ԵԱՀԿ գործող նախագահի հայտարարությունը Լիսաբոնի գագաթնաժողովում, Բուդապեշտի գագաթնաժողովի հայտարարությունը, ՄԱԿ Անվտանգության խորհրդի բանաձեւերը: Սակայն արդեն մարդիկ արձագանքում են, որ սրանք ոչ բոլոր բանակցային փաստաթղթերն են, եւ անհայտ է, թե ինչ սկզբունքով են ընտրվել: Այս փաստաթղթերի շարքում չկա Քի Վեսթի տարբերակը, իսկ Մեղրիի եւ Ղարաբաղի փոխանակման տարբերակը պաշտոնական փաստաթուղթ չէ, այլ՝ «Հայկական ժամանակ»-ում 2008 թ. մի հրապարակում: Կառավարությունից չեն բացատրել, թե ինչու է նախկին ղեկավարներից միայն երրորդ նախագահի նամակը հանրայնացվել, իսկ մյուս առաջնորդների գրագրությունը՝ ոչ: Բացակայում են նաեւ հայկական կողմի պատասխանները: Փաշինյանը, հիշեցնենք, ամիսներ շարունակ Հայաստանի նախկին նախագահներին բանավեճի է կանչում, իսկ նրանք հակադարձում են, թե՝ բանակցային փաստաթղթերը եւ հատկապես 2019 թ. Լավրովյան կոչվող առաջարկը հրապարակիր: Հիմա այն հրապարակվել է, սակայն չկա իր՝ Նիկոլ Փաշինյանի պատասխանն այդ առաջարկին:

Քաղաքագետ **Սուրեն Զոլյանը**, մեզ հետ զրույցում անդրադառնալով թեմային, ասում է. «Այս քննարկումը վաղուց է սկսվել: Քննարկումներն ընթանում են եւ դեռ մինչեւ 100 տարի կարող են ընթանալ, քանի որ խոսքն արտառոց մի երեւույթի մասին է: Դիվանագիտության եւ մարդկային պատմության մեջ հազիվ կարելի է գտնել նման բան, սա քաղաքական արկածախնդրության եւ անմեղսունակության նմուշ է: Համաշխարհային պատմության մեջ անգամ դժվար է գտնել նման նախադեպ: Ինչո՞ւ իշխանությունները գնացին այս փաստաթղթի հրապարակմանը: Արդյո՞ք սա ազնվության նշան է: Ամեն անգամ, երբ խոսք էր գնում նախագահների հետ բանավիճելու մասին, եղել են առաջարկներ՝ հրապարակելու փաստաթղթերը, որպեսզի բանավեճի թեման լինի հստակ: Ես կարծում եմ, որ այս ամենը ոչ մի կապ չունի իշխանության ազնիվ լինելու հետ: Լուծարված է Մինսկի խումբը, եւ պետք է հրապարակվեին փաստաթղթեր: Անգամ այստեղ են հայտնվել «Հայկական ժամանակ»-ի հրապարակումը, Սերժ Սարգսյանի նամակը եւ այլն: Ամեն ինչ իրար են խառնել: Հրապարակումը պետք է սկսվեր ԵԱՀԿ-ի գործընթացներից, դա կլիներ տրամաբանական: ԵԱՀԿ-ի առաջին ընդունած փաստաթուղթը՝ «Լեռնային Ղարաբաղ-Ադրբեջանի Հանրապետություն», այսպիսին է եղել այն, թեպետ նշված է եղել, որ Հայաստանը դրա հետ համաձայն չէ: Ես գիտեմ, թե որքան բարդ է եղել այդտեղ անգամ մեկ ստորակետ փոխելը, այն ոչ միայն բանակցող պատվիրակությունների հետ պետք է համաձայնեցվեր, այլեւ համապատասխան մայրաքաղաքների՝ Վաշինգտոն, Մոսկվա, Փարիզ եւ այլն: Մենք տեսնում ենք, որ հրապարակված վերջին փաստաթղթում չկա ոչինչ Ադրբեջանի տարածքային ամբողջականության մասին, կա հստակ դիրքորոշում, որ այս լուծումը պետք է հիմնված լինի ինքնորոշման սկզբունքի վրա: Ի՞նչ է ասում այդ փաստաթուղթը: Ասում է՝ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդ, մնա քո սահմաններում, ինչպես որ եղել ես, տուր Ադրբեջանին այն, ինչ նվաճել ես որպես անվտանգության գոտի, քեզ տրվելու է միջազգային կարգավիճակ՝ մինչեւ հանրաքվե: Այսինքն՝ կստանաք Արցախը՝ Լաչինի եւ Քելբաջարի հետ: Այսինքն՝ մենք ունենալու էինք մի պետություն, որը լինելու էր միջազգային առումով ճանաչված, երաշխիքներով: Եթե մենք համեմատենք ոչ միայն այն, ինչ հիմա ունենք, այլեւ առհասարակ այն իրավիճակի հետ, որ կար, հաշվի առնելով այն 5 շրջանները, որոնք պետք է վերադարձվեին եւ ապառազմականացվեին, Հայաստանն իր բեռից նաեւ ազատվում էր: Դա ստանձնում էր կամ Ռուսաստանը, կամ այլ ուժ: Շատ կարեւոր է նաեւ, որ հրապարակվեց 2016 թվականին Սերժ Սարգսյանի նամակը Պուտինին, ինչը ցույց տվեց, որ Հայաստանում աշխատել է իսկապես լավ կոլեկտիվ: Ի պատիվ Սարգսյանի, նա կարողացել է ղեկավարել մի փայլուն մասնագիտական խմբի, որը կարողացել է 2016-ի երկիմաստ կետերի մեզ մտահոգող խնդիրները վերացնել: Խոսքը հրապարակախոսության մասին չէ, որ ով ավելի գեղեցիկ կգրի, ում գրածն ավելի մեծ տարածում կգտնի: Ոչ: Այժմ հասկանալի չէ, թե ինչ պրոցեսներ են հետեւել 2018-ից հետո: Եթե բանակցություններով ինչ-որ բան իշխանության սրտով չէր, դրանից հրաժարվելու փոխարեն կարելի էր լավացնել այն, հստակեցնել եւ այլն: Հրաժարվել ամեն ինչից՝ նշանակում է պատրաստվել պատերազմի, իսկ եթե պատերազմ, ապա դրա համար պետք է մոբիլիզացիա, հարաբերությունների կարգավորում դաշնակիցների հետ, նոր դաշնակիցներ ձեռք բերել եւ այլն: Մենք նման բան չտեսանք: Թե ինչի վրա էր հույսը՝ չգիտենք»:

## Կոմիտեի նախագահը «տեղյակ» չի՞ եղել

Նախորդ շաբաթ գրել էինք, որ ԿԳՄՍՆ ենթակայությամբ գործող Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեում Հակակոռուպցիոն կոմիտեն խոշոր չարաշահումներ է բացահայտել՝ 200 միլիոն դրամի չափով: Մեզ հայտնել էին. «Ի պատասխան ձեր հարցմանը, հայտնում ենք, որ Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթի շրջանակում ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի 2 պաշտոնյաների մեղադրանքներ են ներկայացվել՝ իշխանական լիազորությունները չարաշահելու եւ առանձնապես խոշոր չափերով գումարի հափշտակության համար»: Մեր տեղեկություններով՝ երկու մեղադրյալներն են Կոմիտեի գլխավոր քարտուղարն ու գլխավոր հաշվապահը: Նրանք ձերբակալվել էին, հաշվապահին կալանավորել էին, ապա խափանման միջոցը փոխել: Ի դեպ, մեզ նաեւ ասացին, որ սա նոր քրեական գործ չէ, ձերբակալությունը տեղի է ունեցել օգոստոսի վերջին: Նախորդ հրապարակման մեջ մենք թյուրիմացաբար նշել էինք, որ գործը վերաբերում է ԲՈԿ-ին՝ Բարձրագույն որակավորման կոմիտեին, բայց ԲՈԿ-ը վաղուց լուծարվել է, դրա որոշ ֆունկցիաներ փոխանցվել են Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեին, որի նախագահը Սարգիս Հայոցյանն է: Ի դեպ, այս կոմիտեն գրեթե ԿԳՄՍՆ-ին հավասար լիազորություններ ունի՝ գիտական հիմնարկների եւ բուհերի կառավարումն ամբողջությամբ նա է իրականացնում: Հակակոռուպցիոն կոմիտեից երեկ մեզ հայտնեցին, որ այս պահին 2 մեղադրյալ կա, որոնց նկատմամբ որպես համակցված խափանման միջոց կիրառվել են բացակայելու արգելքը եւ պաշտոնավարման կասեցումը:

Հիշեցնենք, որ վերջերս նաեւ որոշ բուհերի նկատմամբ է արշավ սկսվել՝ աղմկոտ գործեր են քննվում Մանկավարժական համալսարանի հետ կապված, որտեղ պրոռեկտորին ու ռեկտորին են մեղադրանք առաջադրել: Վերջերս նաեւ կաշառք ստանալու մեղադրանքով ֆիզկուլտինստիտուտի ամբիոնի վարիչ է ձերբակալվել:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

## «ՔԱՂՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ» ՑՈՒՑԱԿԸ ԿԱՁՄԵԼՈՒ «ԲԱԶԱՐՆԵՐ» ԵՆ

Գրել էինք, որ Նիկոլ Փաշինյանը բարդ ընտրության առջեւ է կանգնած՝ կուսակցության նախընտրական ցուցակը ձեւավորելու հարցում, ու տեւական ժամանակ է, ինչ այս հարցը դարձել է իշխող թիմի քննարկման առանցքային թեման: «Կուսակցությունների մասին» օրենքն ասում է, որ կուսակցության համագումարի կամ համաժողովի բացառիկ իրավասությունն է՝ «ԱԺ հերթական ընտրություններում կուսակցության ընտրական ցուցակում թեկնածուների՝ առնվազն առաջին 3 տասնյակի հաստատումը, իսկ դաշինքով ընտրություններին մասնակցելու դեպքում՝ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում թեկնածուների՝ առնվազն առաջին 3 տասնյակի հաստատումը»:

Օրենքում նշված «հաստատում» բառից էլ փորձել է կառչել Փաշինյանը եւ հարցը ներկայացնել կուսակցության քննարկմանը: Նա, բնականաբար, շատ կուզեր, որ վարչությունը, ՔՊ ակտիվը միաձայն որոշում կայացներ՝ ցուցակի ձեւավորումը վերապահել ՔՊ նախագահին, ապա իր կազմած ցուցակը ներկայացնեին համաժողովի հաստատմանը, քանի որ նա հասկանում է, որ իր մի քանի «լյուբիմչիկները» շատ փոքր շանսեր ունեն՝ համաժողովի պատվիրակների ընտրությամբ առաջատար հորիզոնականներ զբաղեցնելու, իսկ եթե նրանք հետին հորիզոնականներում հայտնվեն, ապա հաջորդ իշխանությունում չեն կարող հավակնել բարձր պաշտոնների:

Իհարկե, կարող եք ասել, որ դեռեւս չխփած արջի մորթին են ՔՊ-ում բաժանում, որովհետեւ հայտնի չէ՝ կարողանալո՞ւ են արդյոք վերարտադրվել, բայց սա նաեւ թիմին ներշնչելու համար է արվում, որ ներսում համոզված լինեն՝ ՔՊ-ի հաղթանակի հարցն արդեն որոշված է, մնում է պաշտոնների բաժանման հարցը որոշեն:

Առայժմ ցուցակի ձեւավորման հարցի վերաբերյալ վերջնական որոշում չի ընդունվել, սակայն մեծամասնությունն այն տարբերակին է կողմ, որ ցուցակը ձեւավորվի համաժողովի պատվիրակների կողմից: Դիցուք, նրանց առաջարկվի 200-250 հոգանոց թեկնածուների ցանկից ընտրել 30 թեկնածուի, եւ, ըստ այդմ, կազմվի ցուցակը: Մյուս կողմից՝ Փաշինյանը չի կարող անձամբ պնդել, որ ինքը ձեւավորի ցուցակը, հետո պետք է թիմակիցներին հանգամանորեն բացատրի, թե ինչու է այսինչի անունը 10-րդ հորիզոնականում եւ ոչ թե 3-րդ: Իսկ քանի որ համաժողովի պատվիրակները տարածքային կառույցների ներկայացուցիչներ են, եւ, որպես կանոն, տեղային շահերն էլ են դեր խաղում ընտրության ժամանակ, ուստի հնարավոր է ընտրության արդյունքներով ամենաշատ ձայն ստացած առաջին 50 թեկնածուին՝ իրենց ստացած ձայների հիման վրա ցուցակագրեն, իսկ 50-ից հետո ցուցակը խմբագրի Նիկոլ Փաշինյանը:

Մեր աղբյուրն ասաց, որ չեն կարող թույլ տալ, որ, օրինակ, մի հեռավոր իքս գյուղի գյուղապետը, օգտագործելով իր կապերը տարածքային կառույցում, բարձր ձայներ ստանա, ցուցակում առաջատար դիրք ունենա՝ հավակնելով պատգամավորի մանդատի, իսկ, դիցուք, թիմի միակ իրավաբան Վլադիմիր Վարդանյանը մղվի հետին հորիզոնականներ: Սա նշանակում է, որ իշխող թիմում ժողովրդավարական կարգով չի ձեւավորվելու ցուցակը:

Ինչ վերաբերում է բարձր պաշտոններին, ապա հավակնորդները պետք է լինեն առնվազն առաջին 30-ի կազմում, իսկ ապագա ԱԺ նախագահը՝ առաջին հնգյակում: Սրա մասին ուղիղ քննարկում չի եղել, բայց տողատակերով հասկացվել է:

Ի դեպ, նախօրեի վարչության նիստում էլ կրկին թեկնածուների գրանցման հարցն են քննարկել, նիստն անցկացրել են հեռավար, քանի որ վարչության անդամներից ոմանք երկրից բացակայում էին:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

## ԾԵԾՎԱԾԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՐԾ ԵՆ ՀԱՐՈՒՑԵԼ, ՈՐ ԲՈՂՈՔԻՑ ՀՐԱԺԱՐՎԻ՝ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԳՆԱ

Մոտ 3 ամիս առաջ Կադաստրի կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանի անունը թնդում էր սոցիալական ցանցերում եւ սոցիարթակներում: Բոլոր լրատվամիջոցներն անդրադարձան սկանդալային պատմությանը. Թովմասյանի հրահանգով առեւանգել եւ ծեծի էին ենթարկել կադաստրի աշխատակիցներից մեկի՝ Վերոնիկայի ամուսնուն՝ Արթուր Կնյազյանին, նրան պատճառելով մարմնական ծանր վնասվածքներ:

Կոմիտեից, իհարկե, հերքում էին լուրը, բայց ՆԳՆ-ն հաստատեց, որ ծեծի մասին հաղորդում են ստացել, որն արձանագրվել է եւ ուղարկվել նախաքննական մարմնին: Ըստ մամուլի տեղեկությունների՝ տղամարդը ծեծի էր ենթարկվել այն բանից հետո, երբ վրդովված գնացել էր Կադաստրի կոմիտե՝ կնոջն աշխատանքից ազատելու հարցը պարզաբանելու: Դեպքին նախորդել էր կնոջն աշխատանքից ապօրինի ազատելը: Վրդովված ամուսինը զանգահարել էր Կադաստրի կոմիտեի պետին, սակայն պատասխան չստանալով՝ ձայնային հաղորդագրություն էր ուղարկել, որտեղ, բնականաբար, կոշտ որակումներ էին եղել: Մի քանի ժամ անց, կնոջ պատմելով, ամուսնուն՝ Արթուրին, մի խումբ անձինք առեւանգել էին, տարել անհայտ ուղղությամբ եւ դաժանաբար ծեծի ենթարկել: Ծեծը շարունակվել էր մի քանի ժամ, եւ դրան մասնակցել էր շուրջ 50 մարդ: Քննչական կոմիտեից լրագրողներին տեղեկացրել էին, որ Կադաստրի կոմիտեի աշխատակցի ամուսնուն ծեծի ենթարկելու գործով նախաձեռնվել է քրեական վարույթ: Վարույթը հարուցվել էր ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով (մի խումբ անձանց կողմից ֆիզիկական ներգործությունը) եւ 191-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով (մի խումբ անձանց կողմից մարդուն առեւանգելը):

Դեպքի վերաբերյալ ծեծվածի կինը՝ Վերոնիկան, դիմում էր գրել ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին՝ պատմելով տեղի ունեցածը: Կինն այդ օրերին մեզ հետ էլ էր զրուցել եւ ասել. «...Դրանք պատժվելու են: Ես իմ հույսը դրել եմ Աստծո վրա, որ Աստված չի թողնելու, որ հանցագործներն ազատության մեջ լինեն, իսկ իրավապահ մարմինները լրջորեն զբաղվում են, ու հավատում եմ, որ մոտ ժամանակներս Սուրեն տականքը հայտնվելու է ճաղերի հետեւում, ինքը եւ իր բանդան...»:

Սակայն հաջորդ օրերին պարզվեց, որ նախաքննության մարմինը ոչ թե ծեծն է քննում եւ փորձում խոշտանգողներին հայտնաբերել ու պատժել, այլ քրեական վարույթ է հարուցել զոհի՝ ծեծված տղամարդու նկատմամբ, իբրեւ թե նա Կադաստրի կոմիտեի նախագահի պաշտոնավարմանն է խոչընդոտել՝ հայհոյել է նրան:

Օրեր առաջ տեղեկացանք, որ կողմերը հաշտության են եկել: Թերեւս, երկրորդ քրեական գործով այնպես են շանտաժ արել, որ մարդը հրաժարվել է ծեծի հետ կապված բողոքից, եւ մի քրգործը մյուսով ջրել են: Մենք Գլխավոր դատախազություն գրավոր հարցում էինք ուղարկել, եւ, ահա, ստացել ենք պատասխանը. «2025 թվականի սեպտեմբերի 15-ին Ա. Կ.-ի կողմից ներկայացված հաղորդման հիման վրա նախաձեռնված 69141425 քրեական վարույթը 2025 թվականի նոյեմբերի 20-ին կարճվել է՝ Քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով (տուժողի եւ հանցանք կատարած անձի հաշտության հիմքով՝ Ռ. Ս.-ի եւ Խ. Խ.-ի նկատմամբ հանրային քրեական հետապնդումները դադարեցվել են՝ Քրեական օրենսգրքի 167-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, Ա. Կ.-ի նկատմամբ հանրային քրեական հետապնդումը դադարեցվել է գործուն զղջալու հիմքով՝ Քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 1-ին մասով)»:

Կապվեցինք Վերոնիկայի հետ, որը հաստատեց, որ հաշտություն են կնքել: Ինչո՞ւ: Ասաց. «Ես չեմ ուզում մանրամասնել, ուղղակի էդպես»:

**- Վերականգնվե՞լ եք աշխատանքում:**

- Ոչ, ոչ: Դեռ այդ ուղղությամբ չենք աշխատում:

**- Ձեզ սպառնացե՞լ են:**

- Ես չեմ ուզում այդ մասին խոսել, ուղղակի հաշտեցման եմ եկել, եւ վերջ:

Սուրեն Թովմասյանը, հիշեցնենք, իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ է: Նիկոլ Փաշինյանի որոշմամբ է նշանակվել այս պաշտոնին՝ 2019 թվականին: Ի դեպ, դաժան ծեծի դեպքից 2 օր հետո լրագրողի հարցին, թե հեղափոխության նպատակն այն էր, որ նման դեպքերում իր թիմակիցները մնան անպատի՞ժ, Նիկոլ Փաշինյանն ասել էր. «Ինձ հայտնի չէ, որ Կադաստրի կոմիտեի ղեկավարի մասնակցությամբ որեւէ միջադեպ եղել է»:

Նյութերը՝ Աննա ՊԱՊԻԿՅԱՆԻ

ԱՆԱՍՆԱԿԵՐ

# ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ПРОДКОРПОРАЦИЯ-Ն ԱՍՈՒՄ Է. «ԳՆՈՐԴԸ ՆԱԽԸՆՏՐԵԼ Է 4-ՐԴ ԿԱՐԳԻ ՑՈՐԵՆ»

Ղազախական ցորենի մասին շարքի այս վերջին հոդվածը կարող էր գրվել նաեւ անցյալ շաբաթ, քանի որ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնից իմ գրությանը, որով խնդրել էի պատասխանել «Ղազախական ցորենի առաքման ակունքում կանգնած է Իլհամ Ալիեւը» հոդվածի հրապարակային հարցադրումներին, դեռ անցյալ շաբաթ պատասխանել էին (գրությունն էլ, պատասխանն էլ կայքում հրապարակում ենք): Ուղարկել էին մեկերկու լուրի հղում՝ նախկինում տարածված: Նորությունը մի տեսանյութ էր, որտեղ, ենթադրաբար, ՍԱՏՄ-ի ղեկավարը հայտարարում է, թե Ղազախստանից ուղարկված 4-րդ կարգի, կերարտադրության համար նախատեսված ցորենը պարենային մթերք է: Այդ տեսանյութն էլ մնացյալ հիմքերի հետ կներկայացնենք դատախազություն: Սակայն անցյալ շաբաթ ՔՊ-ից տարածված՝ եպիսկոպոսների ստորագրությամբ տեքստերը եւ ուղեկցող բեմականացումներն այնպես զբաղեցրին լրատվադաշտը, որ ճիշտ էր սպասել, մինչեւ հերթական տեղեկատվական փոթորիկը մարի:

### ԻՆՉՈՒ 4-ՐԴ ԿԱՐԳԻ ՑՈՐԵՆԸ ԿԱՐՈՂ ԷՐ ԴԱՌՆԱԼ ՖՈՒՐԱԺ, ԲԱՅՑ ՈՉ 3-ՐԴ ԿԱՐԳ

Այն բանից հետո, երբ Ղազախստանից հայտարարեցին, թե Հայաստան են ուղարկել 4-րդ կարգի ցորեն, ՀՀ էկոնոմիկայի փոխնախարարն էլ հարկադրված եղավ խոստովանել, որ, այո, Հայաստան է ներմուծվել անասնակեր, մի քանի օր անց իբրեւ թե փորձաքննություն անցկացրած Սննդամթերքի անվտանգության ՊԾ-ն (պետական ծառայությունը), որ հիմա կոչվում է ՏՄ (տեսչական մարմին), հայտարարեց, թե Ղազախստանից ուղարկված 4-րդ կարգի ցորենը Հայաստանում լաբորատոր փորձաքննության ենթարկելիս դարձել է 3-րդ կարգ: Սա անմեղսունակ հայտարարություն էր, եթե ոչ՝ կեղծարարության առերեւույթ հանցագործություն:

Ինչո՞ւ. որովհետեւ գոյություն ունեն բնության եւ կենսաբանության օրենքներ: Մեջբերում եմ Société Générale de Surveillance (SGS)-ի ղազախստանյան կառույցի (SGS Kazakhstan LTD) լաբորատորիայի ղեկավար՝ կենսաբանական գիտությունների դոկտոր Օ. Վ. Ֆուրսովի մեկնաբանությունը, թե ինչ աստիճան է վատթարանում ցածրակարգ ցորենի որակը շաբաթներ տեւող տրանսպորտային փոխադրման արդյունքում, այն էլ՝ տաք եղանակին.

«Բարձր ալֆա-ամիլազային ակտիվությամբ հացահատիկի (անկման թիվը 200 վրկ-ից ցածր) տեղափոխման ընթացքում միշտ արձանագրվում է որակի վատթարացում: Այդ ցուցանիշը դինամիկ բնույթ ունի: Անգամ երբ տեղափոխվող հացահատիկի մեջ չկան ծլման տեսանելի նշաններ, ընդամենը հասկի մեջ խթանված է ալֆա-ամիլազի սինթեզումը, միեւնույն է, տեղափոխումը, մանավանդ՝ տաք եղանակին, հանգեցնում է սինթեզի պրոցեսի հետագա ծավալման, նույնիսկ երբ հացահատիկի խոնավությունը միայն 14% է: Համապատասխանաբար, մինչեւ հացահատիկը տեղ է հասնում, անկման թիվն էլ ավելի է նվազում: Միայն հացահատիկի մեծածավալ չորացումը (մինչեւ 12%-13%) կարող է թույլ տալ խուսափել տեղափոխման այդ բացասական ազդեցությունից»:

Այնպես որ, հոկտեմբեր-նոյեմբերին, 15-16 C ջերմաստիճանի պայմաններում շաբաթներ շարունակ փոխադրման ճանապարհին գտնված, հասկի մեջ ծլարձակած, հետեւաբար միկո եւ ալֆա տոքսիններով վարակի ենթակա ցորենը կենսաբանության օրենքներով կարող էր լիովին որակազրկվել եւ դառնալ ֆուրաժ, բայց երբեք չէր կարող որակի բարելավում արձանագրել եւ դառնալ 3-րդ կարգ: Իսկ որպեսզի հասկացվի, թե ներմուծված 4-րդ կարգի ցորենն ինչ որակական հատկանիշներ ունի, որքանով է վտանգավոր կամ անվտանգ, ինչ հետեւանքներ կարող է առաջացնել, եթե հայտնվի մարդկային սննդի կամ կենդանական կերի մեջ, հարկավոր է իմանալ այն տվյալները, որ միջազգային ստանդարտի փորձաքննությունը կտար:

Առաջին եւ կարեւորագույն տվյալը՝ որքան է եղել ծլած ցորենի պարունակությունը ներմուծված ղազախական ցորենի խմբաքանակում: Նախորդ հոդվածներում գրել ենք՝ ալրաղաց գնացող ցորենի քանակում ծլած ցորենի թույլատրելի սահմանային չափը 3%-ն է: Մինչդեռ Ղազախստանում աճած ցորենը երաշտ-հորդառատ անձրեւներ հերթագայության արդյունքում միջինը 15-16% ծլած ցորենի պարունակություն է ունենում: Լինում են դեպքեր՝ ծլած ցորենի ցուցանիշը հասնում է 85%-ի: Որքա՞ն է Հայաստան եկած ղազախական ցորենի քանակությունում ծլած ցորենի պարունակությունը՝ ՍԱՏՄ-ից չեն պատասխանել, ինչը սպառիչ կերպով խոսուն փաստ է:

Երկրորդը. հարցրել էինք՝ ի՞նչ ստանդարտի համապատասխանող լաբորատորիայում, սարքավորումներով եւ մասնագետների կողմից է իրենց փորձաքննությունը կատարվել՝ դիցուք, ISO 17025, ISO 9001, թե՞մեկ այլ, Ղազախստանից ներմուծված ցորենը ո՞ր մեթոդով են փորձաքննության ենթարկել՝ ELISA (Enzyme-Linked Immnumosorbent Assay), LC-MS/MS, թե՞ այլ: Դարձյալ քար լռություն: Դեռ հարց է՝ իրենք միջազգային ստանդարտներին որքանով են ծանոթ կամ նման փորձաքննություն ի զորո՞ւ են անցկացնել:

Վերջինը՝ ՍԱՊԾ (ՏՄ)-ին կոչ էինք արել հրապարակել փորձաքննության կոնկրետ պարամետրեր՝ aflatoxin B1, deoxynivalenol (DON), fumonisin, ochratoxin, zearalenone (ZEN), trichothecene (T-2 toxin) տոքսինների պարունակությունը ցորենի նմուշառված խմբաքանակում: Դարձյալ քար լռություն, որեւէ պատասխան չի տրվել: Գուցե ոչ բոլոր, բայց մի երկու տոքսինի պարունակություն իրենք կարողանային ստուգել եւ եթե դրանց արդյունքներն էլ չեն հրապարակում, յուրաքանչյուրը կարող է պատկերացնել, թե որքան աննպաստ տվյալներ են ստացել:

Արդյունքում, ՍԱՏՄ-ն ներմուծված ղազախական ցորենի լոբորատոր փորձաքննության ամեն թվային տվյալ փակի տակ պահած (եթե, իհարկե, առհասարակ պատշաճ փորձաքննություն անցկացրել են եւ տվյալների տիրապետում են), երեւի «ազնիվ խոսքով» են հավակնում հավատացնել, թե ներմուծված ցորենն անվտանգ է: Հաստատ, հավատացող գտնվեց:

### ՂԱԶԱԽՍՏԱՆԸ ԿՄԱՏԱԿԱՐԱՐԻ 3-ՐԴ, 4-ՐԴ ԿԱՐԳԵՐԻ ԵՎ ՖՈՒՐԱԺԱՅԻՆ ՑՈՐԵՆ

Սակայն մինչ Հայաստանի իշխանությունները ղազախական ցորենի առնչությամբ իրենց հորինած ստերի սարդոստայնում այնպես են խճճվել, որ անմեղսունակության սահմանը հատած՝ չեն գիտակցում, թե ինչ են խոսում, Աստանայից ցորենի մատակարար Продкорпорация-ն նոր սկանդալային բացահայտումներ արեց.«Հայկական շուկա հացահատիկի առաջին մատակարարման համար Продкорпорация-ն առաջարկել է տարբեր որակի ցորեն, այդ թվում՝ բարձր սպիտակուցային hi-pro՝ 27-28% գլյուտենի պարունակությամբ, սակայն հաճախորդը նախընտրել է 4-րդ կարգի ցորենը» (https://apk-news.kz/news/item-6119): Այնուհետ մեջբերում են ոմն Արտակ Շատվորյանի, որպես 2025-ի հոկտեմբերին Продкорпорация-ի հետ պայմանագիր կնքած եւ Հայաստան ղազախական ցորեն ներմուծած «Բաղրամյան» ՍՊԸ-ի ղեկավարի, որը դիֆերամբներ է երգում ներմուծված 4-րդ կարգի ցորենի մասին. «Սկզբում մենք հացահատիկը գնել էինք կերարտադրության նպատակով, սակայն լաբորատոր փորձաքննության արդյունքները ցույց տվեցին ղազախական 4-րդ կարգի ցորենի բարձր որակը: Հացահատիկի ներմուծված խմբաքանակի գրեթե բոլոր ցուցանիշները՝ ծավալային քաշը, սպիտակուցը, անկման թիվը, զգալիորեն գերազանցում են պայմանագրային պահանջները, եւ ցորենը նաեւ պիտանի է ալյուրի արտադրության համար...»:

Այժմ «Բաղրամյան» ՍՊԸ-ի, այլ կերպ ասած՝ Արմավիրի մարզի Լեռնագոգ գյուղում գտնվող Բաղրամյանի ալրաղացի տնօրենն այլ անձ է՝ Վլադիմիր Գասպարյան: Արտակ Շատվորյան անուն-ազգանվամբ անձի «Բաղրամյան» ՍՊԸ-ում չեն ճանաչում: Ես խոսել եմ երեք տարբեր անձանց հետ, նրանցից ոչ ոք Արտակ Շատվորյան չմտաբերեց: Դատելով ՀՀ ընտրողների ռեգիստրից՝ Հայաստանում միայն մեկ անձ կա՝ նման անուն-ազգանվամբ, Երեւանում: Արդյո՞ք այդ անձն իսկապես բանակցել է ղազախական Продкорпорация-ի հետ՝ ցորեն ներմուծելու շուրջ, եւ ի՞նչ լիազորությամբ է դա արել, ինչո՞ւ է որոշել կերարտադրության ցորեն ներմուծել, ինչո՞ւ են ՀՀ իշխանություններն իրականությունը կեղծել, ի սկզբանե անասնակերը որպես սննդային ցորեն ներկայացրել, եւ միայն մամուլի հետաքննության ու Продкорпорация-ի խոստովանությունների շնորհիվ է բացահայտվել իրականությունը՝ թող դատախազությունում պարզեն:

Իսկ դատախազությունն արժե, որ խնդրով զբաղվի եւ հանգամանքները պարզի նաեւ հանուն ապագայի, քանի որ, ինչպես Աստանայից են հայտնել. «Հարկ է նշել, որ չնայած 4-րդ կարգի ցորեն մատակարարելու համաձայնագրին, Продкорпорация-ն հայ գործընկերներին մատակարարել է բարելավված բնութագրիչներով հացահատիկ: Այսպես. ցորենի որակը եւ հացաթխման պիտանելիությունը բնութագրող անկման թիվը կազմել է 235-334 վայրկյան, ծավալային քաշը (натура, test weight)՝ 775 գր/լ, սպիտակուցի պարունակությունը՝ 12.8%, սնձանը՝ 20%, ինչը վկայում է հացահատիկի լավ որակի եւ այն հացաթխման նպատակներով օգտագործելու հնարավորության մասին: Բացի այդ, Продкорпорация-ն հնարավորություն ունի մատակարարել տարբեր որակի հացահատիկ, այդ թվում՝ 3-րդ եւ 4-րդ կարգերի կոշտ եւ փափուկ ցորեն, ինչպես նաեւ՝ ցածրակարգ հացահատիկ՝ կախված հաճախորդի կարիքներից (https://apk-news.kz/news/item-6119)»:

Այսինքն, Ղազախստանից խոստովանում են, որ կերարտադրության համար նախատեսված 4-րդ կարգի ցորենի բնութագրիչներն արհեստականորեն բարելավվել են (քիմիական հավելումներով բարելավումներից բացի, դրանց բարելավման այլ միջոց կա՞) եւ ուղարկվել Հայաստան: Հայաստանում էլ, ինչպես տեսանք, արհեստականորեն փոփոխված ցուցանիշները չեն տարբերել եւ հայտարարել են, թե ներմուծված անասնակերն այնպիսի բարձր որակ ունի, որ կարող է սննդարդյունաբերության մեջ օգտագործվել: Եվ այսպիսի ցորեն Ղազախստանից դեռ գալու է՝ 3-րդ կարգի, 4-րդ կարգի եւ ֆուրաժ: Այստեղ ոչինչ չի մնում անել, քան հանրային առողջությանը սպառնացող հանցագործության մասին հաղորդում ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազություն: Առաջիկա օրերին կներկայացնենք եւ հաղորդման տեքստն էլ կհրապարակենք:

ՀԳ. Ես սովորություն չունեմ սոցցանցային գրառումներ կարդալու, առավել եւս՝ անդրադառնալու: Բայց ասացին, որ ՍԱՏՄ մի աշխատակից իմ գրության վերաբերյալ գրառում է արել, ուշադրությունս գրավեց անուն-ազգանունը՝ Անուշ Հարությունյան: Դա ինձ Հոկտեմբերի 27-ի ահաբեկչության հետ կապված ինչ-որ բան հիշեցրեց: Հավելյալ ճշտեցի՝ չէի սխալվել: Անուշ Հարությունյանն անձ է, որը ներգրավվածություն է ունեցել 1999-ի հոկտեմբերի 27-ի ահաբեկչության մեջ. նա է եղել հոկտեմբերի 27-ին Նաիրի Հունանյանի համար անցագիր իջեցնողը: Ապշել կարելի է, թե պետության դեմ երբեւէ գործված մեծագույն հանցագործության նման դերակատարն ինչպես է պետական համակարգում աշխատում առհասարակ եւ դեռ պետական մարմինների հետ շփվելու թեմայով դասեր տալիս: Զուր չէ ասված՝ O tempo, o mores (Օ՜, ժամանակներ, օ՜, բարքեր)... Մնում է, որ Նաիրի Հունանյանը պետության թեմատիկայով դասախոսի:

Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ
lusine@hraparak.am

ԵՄ

# ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՀԱՅՏՈՐԵՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ Է ՔՊ-Ի ՔԱՐՈԶԱՐՇԱՎԸ

Բրյուսելում գտնվող Արարատ Միրզոյանը հանդիպել է եվրադիվանագիտության ղեկավար Կայա Կալլասի հետ, որը հայտնի է իր հակառուսականության բացահայտ դրսեւորումներով: Այդ հանդիպման արդյունքում որոշվել է, որ Եվրամիությունը 15 միլիոն եվրո գումար է հատկացնելու Հայաստանին, որի մի մասը, ըստ էության, ուղղվելու է հաջորդ տարվա խորհրդարանական ընտրությունների ժամանակ Նիկոլ Փաշինյանի վերարտադրության ապահովմանը, ՔՊ-ի կողմից իր քաղաքական հակառակորդների դեմ պայքարին: Սա բացահայտ միջամտություն է Հայաստանի ներքաղաքական կյանքին եւ Հայաստանի ինքնիշխանության ոտնահարման ցցուն դրսեւորում:

Կայա Կալլասը, Արարատ Միրզոյանի հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ խոսելով այդ գումարի նպատակային օգտագործման մասին, ասել է, որ ԵՄ-ի կողմից Հայաստանին տրվող գումարը կօգտագործվի 2026 թվականի խորհրդարանական ընտրություններից առաջ արտաքին միջամտություններից Հայաստանի դիմադրողականության բարձրացման համար: «Ռուսաստանը եւ նրա արբանյակները խորհրդարանական ընտրություններից առաջ Հայաստանում ապատեղեկատվական արշավներ են անցկացնում: Մենք տեսնում ենք նույն ցանցերի օգտագործումը Մոլդովայում, ինչը նշանակում է, որ սցենարը նույնն է: ԵՄ ֆինանսավորումը կօգնի բացահայտել եւ արձագանքել նման ազդեցություններին»,- հայտարարել է եվրադիվանագիտության ղեկավարը:

Ինչ է սա նշանակում. ինչպես Մոլդովայի դեպքում, Եվրամիությունը որոշել է բացահայտ եւ անթաքույց միջամտել Հայաստանի խորհրդարանական ընտրություններին, իր միջամտությամբ կանխորոշել ընտրության արդյունքները՝ հերթական անգամ Հայաստանի իշխանության ղեկին թողնելով իր դրածոներին: Կայա Կալլասը ճիշտ է ասում. սցենարը նույնն է, ինչ Մոլդովայում. այնտեղ եւս ԵՄ-ն պաշտպանում էր իր դրածո Մայա Սանդուի կառավարությանը, իսկ հիմնական ընդդիմադիր ուժերը հայտարարվեցին ռուսական արբանյակներ, որոնց մի մասի մասնակցությունը խորհրդարանական ընտրություններին արգելվեց. քվեարկությունից ժամեր առաջ չեղարկվեց այդ կուսակցությունների գրանցումը, իսկ մի քանի կուսակցությունների ընդհանրապես արգելվեց նույնիսկ ընտրություններին մասնակցության հայտ ներկայացնել եւ գրանցվել: Չնայած ընտրությունների արդյունքները խիստ վիճարկելի էին, ընդդիմությունը հրաժարվում էր ճանաչել արդյունքների օրինականությունը, քանի որ կառավարող կոալիցիան կարողացավ հաղթել բացառապես դրսից՝ ԵՄ երկրներում գտնվող ընտրատեղամասերի արդյունքների հաշվին, ԵՄ-ն եւ դրան անդամակցող առանձին երկրներ միանգամից ճանաչեցին իշխող կոալիցիայի հաղթանակը՝ այդկերպ օրինականացնելով ընտրակեղծարարությունը:

Հիմա ԵՄ արտաքին հարաբերությունների հանձնակատարը Փաշինյանին եւ նրա իշխանությանն ասում է, որ մենք կանաչ լույս ենք վառում նաեւ ձեր առաջ. գործեք՝ ինչպես Մոլդովայի իշխանությունները. բոլոր այն կուսակցությունները, որոնցից դուք պոտենցիալ սպառնալիք եք տեսնում, որոնք վայելում են հայ հասարակության, հայ ընտրողների համակրանքը եւ կարող են հաղթել ընտրություններում, կարող եք հռչակել Կրեմլի արբանյակներ եւ արգելել նրանց մասնակցությունը խորհրդարանական ընտրություններին, մենք միայն կողջունենք նման մոտեցումը:

Հարց է առաջանում. իսկ ինչի՞ համար է փողը, ընդդիմադիր կուսակցությունների՝ ընտրություններին մասնակցելն արգելելու համար փող պետք չէ, այն էլ՝ միլիոնավոր եվրոներ: Դրա համար պետք են ընդամենը հնազանդ դատարաններ, որոնք կչեղարկեն այս կամ այն կուսակցության պետական գրանցումը, եւ նույնքան հնազանդ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, որը կարգելի կուսակցության մասնակցությունն ընտրություններին, եթե ինչ-ինչ պատճառներով դատարանը չչեղարկի որեւէ ընդդիմադիր կուսակցության գրանցումը: Այդ երկուսն էլ փաշինյանական իշխանությունն այսօր ունի՝ կամակատար դատարաններ եւ միանգամայն վերահսկելի ԿԸՀ: Փողը տրամադրվելու է ոչ թե Հայաստանին, այլ դրանով ֆինանսավորվելու են եվրոպական PR ընկերությունները, որոնք քաղտեխնոլոգիական աջակցություն են տրամադրելու իշխանությանը եւ ՔՊ-ին: Այդ գումարից Հայաստանին եւս փաշինյանական իշխանության կողմից հռչակվեն որպես ռուսական արբանյակ, եւ արգելվի նրանց մասնակցությունն ընտրություններին: ՔՊ-ն եւ Փաշինյանը հաղթելու միայն մի տարբերակ ունեն. եթե ընտրություններին մասնակցեն միայնակ կամ սեփական արբանյակների հետ, իսկ եվրաչինովնիկները չեն ուզում կորցնել վերահսկողությունը Հայաստանի նկատմամբ, որն անպայման տեղի կունենա իրենց դրածո ուժի պարտության դեպքում:

Ավետիս
ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

# ՆԸՕԼԳՈ՞Ի ՆԱՊՈԼԵՈՆ

Պարոն Ջոնսին մերժելուց եւ ագարակին տիրանալուց հետո կենդանիները միառժամանակ ինքնաբավարարված էին: Նրանք անարգել ելումուտ էին անում պարոն Ջոնսի առանձնատան բոլոր անկյունները, ոմանք հոտոտում էին դարակները, ոմանք՝ փորձարկում սանհանգույցը, ոմանք, հատկապես Երեքնուկը, հայելիների մեջ զմայլվում, բացում չուլանների դռները, փորձում անկողինների փափկությունը… Այս ամենը, սակայն, երկար չտեւեց: Մի գեղեցիկ օր անասունների հեղափոխության առաջնորդ Նապոլեոն խոզը տեղափոխվեց պարոն Ջոնսի ապարտամենտները, եւ ֆերմայի բնակիչների հեքիաթային առօրյան դրանով ավարտվեց: Նապոլեոնը նրանց հանդիմանում էր՝ դուք ձեր ներկայությամբ խանգարում եք իմ ուղեղի աշխատանքը, մինչդեռ իմ ուղեղն անընդհատ պետք է աշխատի, որ դուք սոված չսատկեք… Սոված մնալու հեռանկարը մեծ ազդեցություն էր գործում անասունների վրա: Պարոն Ջոնսը, մանավանդ երբ խմած էր լինում, նրանց հաճախ էր սոված թողնում: Եվ, լսելով Նապոլեոնի սպառնալիքները, անասունները խմբերով քաշվեցին գոմերն ու փարախները: Բայց նրանք շատ էլ չտխրեցին… Ինչո՞ւ տխրեին, չէ՞ որ պարոն Ջոնսի փոխարեն հիմա արդեն Նապոլեոնն էր հոգալու կերի ու տանիքի հարցերը՝ իրենցից մեկը, իրենց նման ազնիվ մի չորքոտանի: «Նապոլեոն, հուպ տուր, միստր Ջոնսին կուլ տուր»… Այսպիսի վանկարկումներով էլ քաշվեցին իրենց գոմերն ու հով լռվեցին՝ ամեն մեկն իր մսուրքի ու լափամանի մոտ:

Նապոլեոնի մոտ մուտք ուներ միայն Ջնագնդին: Չնայած այս խոզի սպիտակ լինելուն, բոլորը նրան համարում էին «գորշ կարդինալ» եւ զգուշանում էին նրանից, որ չլինի թե Նապոլեոնի ականջին ուրիշ բաներ փսփսա ու անասնաֆերմայի անդորրը փչացնի: Ջնագնդին պտտվում էր գոմերով ու փարախներով, հետեւում կերի պաշարներին, որոնք սպառվում էին ավելի արագ, քան Նապոլեոնի ուղեղն էր աշխատում: Դուք չափազանց շատակեր եք՝ զայրանում էր ձիերի ու կովերի վրա, օրինակ վերցրեք ծերուկ Բենիամինից, նա է մեր ժամանակի իսկական հերոսը, որ, չնայած իր տարիքին, դեռ ջուր ու փայտ է կրում ֆերմայի արեւ Նապոլեոնի համար ու մի բան էլ հարկեր վճարում՝ նրա սանհանգույցը մաքրելու տեսքով: Մենք էլ կաթ ենք տալիս՝ արդարանում էին կովերը, մենք հող ենք վարում՝ նեղսրտում էին հովատակները… Բայց ամեն անգամ իրավիճակը լիցքաթափում էր Մոլլին՝ թեթեւամիտ եւ աշխատանքից խուսափող զամբիկը, որի մի հայացքը բավական էր, որ Ջնագնդին հալվի ու չիմանա ինչպես թաքցնի զգացողությունները… Մի անգամ, երբ նա ու Մոլլին միայնակ էին մնացել ագարակի հետնամասում, Մոլլին այնպիսի բառերով էր նկարագրել սրա «տեմպերամենտն» ու մյուս բարեմասնությունները, որ գլուխը պտտվել էր: Դրանից հետո Մոլլիի հետ ամեն հանդիպում, Մոլլիի ամեն հայացք իսկական տոն էր դառնում Ջնագնդիի համար:

Մի օր էլ կենդանիները, կերի պակասից նեղված, բունտ են անում Ջնագնդիի դեմ եւ պահանջում, որ նա գնա եւ Նապոլեոնին զեկուցի իրավիճակը: Նրան ասեք՝ թող մի քիչ արագ մտածի, որովհետեւ ես այլեւս վար անելու ուժ չունեմ՝ ելույթ էր ունեցել Դմբուզն ու գավակը դարձրել դեպի Ջնագնդին: Վերջինս արանքը ճղել էր՝ օդ թռցնելով իր ճանապարհին պատահած հավերին: Հեղափոխությունից հետո սա առաջին դեպքն էր, որ ագարակի անասուններն ըմբոստանում էին Նապոլեոնի եւ հատկապես նրա ուղեղի աշխատանքի դեմ: Շատ չանցած՝ Ջնագնդիի ուղեկցությամբ պատշգամբ ելավ Նապոլեոնն անձամբ ու դիմեց հավաքված կենդանիներին. «Սիրելի ագարակակիցներ, դուք պետք է իմանաք, որ ես գիշերները չեմ քնել ու անընդհատ մտածել եմ ձեր մասին: Մտածել եմ, մտածել եւ ահա թե ինչ եմ մտածել… Մեր հարեւան ագարակում խոտի մի հսկայական դեզ կա: Ես պաշտոնապես հայտարարում եմ, որ այն մեր դեզն է, եւ վերջ…»:

Ծերուկ Բենիամինը, որ հարեւան ագարակատիրոջից ճիպոտի մի քանի հարված էր ստացել դունչն այդ դեզին մեկնելու համար, երկար ականջները թափահարելով, դիմում է Նապոլեոնին՝ Ձերդ կենդանական ուղեղների ամենապայծառակիսագունդ, արդյոք լա՞վ եք մտածել, արդյոք, այդ դեզի հետ կապված, պայմանավորվածություն ունե՞ք ագարակատեր պարոն Փիլինգթոնի հետ…

- Դա քեզ՝ ավանակիդ, չի վերաբերում, ես ինչ պետք է, այն էլ պայմանավորվել եմ: Գնացեք եւ հենց հիմա դեզը տեղափոխեք մեր ֆերման,- ճղճղաց Նապոլեոնն ու մտավ ներս:

Կենդանիներն իրար նայեցին… Կերի հեռանկարը գերել էր բոլորին, անգամ՝ շներին ու կատուներին, որոնք խոտակեր չէին: Հարեւան ագարակի դեզը մագնիսի նման ձգում էր՝ չոր խոտ, բուրումնավե՛տ… Ի՞նչ իմանային, սակայն, Դմբուզն ու կովերը, որ Նապոլեոնի ճղճղոցը հասել էր հարեւան ֆերմա՝ անձամբ միստր Փիլինգթոնին, որ արդեն 30 տարի այդ դեզի շուրջ վեճ ուներ պարոն Ջոնսի հետ ու չէր ցանկանում հրաժարվել դրանից: Այս դեպքից մի քանի օր էր անցել: Մի օր էլ Ջնագնդին գլխապատառ ներս ընկավ Նապոլեոնի ննջարան ու ճղճղոցը դրեց. «Տեր իմ պայծառագլուխ, առավոտյան շրջայցին պարզեցի, որ կենդանիները չկան, գոմերը դատարկ են, ամենուր արյուն ու բուրդ է թափված, չափառները տապալված են, հավաքներում ձու չկա, միստր Փիլինգթոնն էլ, ճիպոտը ձեռքին, մտել է մեր ագարակն ու մեզ է սպասում… Կորած ենք…»:

- Ասում ես՝ վաբշե անասուն չի մնացե՞լ:

- Չէ… Վեր կաց, քանի դեռ հետնամուտքից փախչելու տեղ կա, մենք էլ հեռանանք:

Սրանց խոսակցության վրա մեկ էլ դռների մեջ միստր Փիլինգթոնն է հայտնվում.

- Էդ ո՞ւմ դեզն էիք ուզում տանել, արա… Բայց դուք մի վախեցեք, ես շնորհակալ եմ ձեզնից, իմ աչքը վաղուց ձեր ագարակի վրա էր: Ես ձեզ չեմ մորթի, դուք ինձ դեռ պետք եք: Ես իմ անասունների մի մասին կքշեմ այստեղ, իսկ դուք, ձեր լափի դիմաց, տիրություն կանեք նրանց ու կշատացնեք: Նըօլդո՞ւ Նապոլեոն…

Էդիկ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan
@hraparak.am

ՍԱՀՄԱՆ

# Արաքսն ապօրինի հատած քուրդը խնդրել է իրեն Թուրքիա չվտարել

Իգդիր քաղաքում 1983-ին ծնված, հնգամյա կրթությամբ, ազգությամբ քուրդ, Թուրքիայի Հանրապետության քաղաքացի, խնամքին 3 անչափահաս եւ առողջական խնդիրներով չափահաս 1 երեխա ունեցող, նախկինում չդատված, ՀՀ-ում մշտական բնակության վայր չունեցող Նեջդեթ Յուսուֆի Աբիքին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2025 թ. ապրիլի 6-7-ն ընկած ժամանակահատվածում Թուրքիայի Իգդիր քաղաքի Արալըքի շրջանից անցել է Արաքս գետը եւ առանց սահմանված փաստաթղթերի ու պատշաճ թույլտվության ապօրինաբար հատել է ՀՀ պետական սահմանը եւ մուտք գործել Հայաստան: Այնուհետեւ գտնվելով ՀՀ-ում՝ 2025 թ. ապրիլի 20-ին, ժամը 23:44-ի սահմաններում, ՀՀ-ից Իրանի Իսլամական Հանրապետություն մեկնելու նպատակով մոտեցել է ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի «Ագարակ» սահմանային անցակետին, սահմանային վերահսկողության ժամանակ ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի համապատասխան աշխատակցին է ներկայացրել իր՝ Թուրքիայի Հանրապետության նմուշի անձնագիրը, որի մեջ փակցված է եղել նաեւ քննությամբ դեռեւս չպարզված հանգամանքներում ձեռք բերված, վերջինիս անհատականացնող տվյալներով լրացված, պետական լիազոր մարմնի կողմից տրվող, իրավունք վերապահող կեղծ փաստաթուղթ՝ ՀՀ մուտքի կեղծ արտոնագիր, նպատակ ունենալով քողարկել իր կողմից ՀՀ պետական սահմանն ապօրինի մուտք գործելու հանգամանքը:

Նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 469 հոդվածի 1-ին մասով (պետական սահմանն ապօրինի հատելը) եւ 457 հոդվածի 1-ին մասով (փաստաթղթերը կեղծելը): Նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանքը: Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանում նախնական դատալսումների ժամանակ Նեջդեթ Աբիքը եւ նրա պաշտպանը արագացված դատաքննություն կիրառելու միջնորդություն են ներկայացրել: Մեղադրյալը դատարանում հայտնել է, որ իրեն պարզ է ներկայացված մեղադրանքը, համաձայն է դրա հետ, իրեն լիովին մեղավոր է ճանաչում: Հանրային մեղադրող Գ.Մանուչարյանն արագացված վարույթի դեմ չի առարկել: 2025 թ. հունիսի 25-ին Սյունիքի դատարանը բավարարել է արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդությունը եւ նշանակել է լրացուցիչ դատալսումներ:

Օգոստոսի 1-ին Սյունիքի մարզի դատարանի Գորիսի նստավայրում դատավոր Հրաչ Դաջունցը Նեջդեթ Աբիքին մեղավոր է ճանաչել առաջադրված հոդվածներով, Քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի 1-ին մասով որպես պատիժ նշանակել է ազատազրկում՝1 ամիս ժամկետով, Քրեական օրենսգրքի 469-րդ հոդվածի 1-ին մասով որպես պատիժ նշանակել է ազատազրկում՝ 1 տարի ժամկետով, նշանակված պատիժներն իրար գումարելով՝ վերջնական պատիժ է նշանակել ազատազրկում՝ 1 տարի 1 ամիս ժամկետով, պատժի կրման սկիզբը հաշվել 2025 թ. ապրիլի 21-ից: Ն. Աբիքի նկատմամբ որպես լրացուցիչ պատիժ է նշանակվել ՀՀ տարածքից վտարելը՝ 5 տարի ժամկետով՝ վտարման երկիր սահմանելով Թուրքիայի Հանրապետությունը: Վտարումը պետք է իրականացվեր Ն. Աբիքի կողմից հիմնական պատիժը կրելուց հետո՝ լրացուցիչ պատժի հաշվարկը սկսելով նրան ՀՀ տարածքից վտարելու պահից: Դատարանը նրա նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանքը թողել է անփոփոխ:

Ն. Աբիքը վերաքննիչ բողոք է ներկայացրել՝ խնդրելով վերանայել Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի կողմից 2025թ. օգոստոսի 1-ին կայացրած դատավճիռը՝ վերացնելով իրեն 5 տարի ժամկետով ՀՀ տարածքից վտարելը: Վերաքննիչ դատարանում այս գործով վերջին նիստը կայացել է նոյեմբերի 14-ին, դատավճիռ դեռ չկա: Դատարանն արդյոք կհարգի՞ քուրդ քաղաքացու խնդրանքը եւ կբեկանի՞ նրան Թուրքիա չվտարելու խնդրանքը:

**Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ**

# Զինծառայողների մահվան առեղծվածը 4 տարում չի բացահայտվել

ՆՅՈՒԹԵՐ

2021 թվականի օգոստոսի 19-ի գիշերը Գորիսի դիրքերում սպանված երեք զինծառայողի գործով մեղադրյալ Սամվել Գրիգորյանն արդեն 4 տարի կալանքի տակ է: Գործը դատարանում է, երկարատեւ ու ձգձգված դատավարության ընթացքում բազմաթիվ անակնկալներ են եղել: Բոլոր տղաները, որոնք ցուցմունք էին տվել Սամվել Գրիգորյանի դեմ, հրաժարվել են իրենց ցուցմունքներից՝ պնդելով, որ դրանք տվել են վախի ու սպառնալիքների ազդեցության տակ: Սակայն դատարանը հրաժարվում է Սամվել Գրիգորյանի խափանման միջոց կալանքը փոխարինել ավելի մեղմ միջոցով:

Կարճ հիշեցնենք այս խճճված գործը: Դեպքը տեղի է ունեցել Կոռնիձորի դիրքերում: Երեք զինծառայողներին գտել էին մահացած, եւ անմիջապես վարկած էր տարածվել, թե դիրքում դիվերսիոն ներթափանցման փորձ է եղել, եւ մեր տղաները զոհվել են թշնամու կրակոցներից: Այս մասին հարձակման օրը տղաները հասցրել էին հեռախոսով հայտնել իրենց ծնողներին: Սակայն քննչական մարմինը շատ արագ հերքեց այս վարկածը՝ գործը «կոտրելով» երկու զինծառայողի վրա:

Ըստ քննիչների, ժամկետային զինծառայող Ա.-ն, որն այդ օրը արթուն՝ հերթափոխի է եղել, մտել է դիրքի կացարան, վերցրել ծառայակիցներից մեկին ամրակցված ԱԿ-74 տեսակի ինքնաձիգը, լիցքավորել այն եւ կրակ բացել քնած համածառայակիցների ուղղությամբ: Դրդողն էլ, ըստ այդ վարկածի, դիրքի ավագն է եղել՝ Ս. Գրիգորյանը, որը, իբր, սեքսուալ բնույթի բռնի գործողություններ է իրականացրել Ա.-ի նկատմամբ: Քանի որ տղաները, մտնելով սենյակ, իբր ականատես են եղել այդ սեքսուալ գործողություններին, դիրքի ավագը հրահանգել է Ա.-ին՝ սպանել նրանց՝ սպառնալով, թե ինչ-որ լուսանկարներ կուղարկի նրա ծնողներին:

Վերջերս Ա.-ն դատարանում խոստովանել է, որ իրեն ստիպել են՝ նման ցուցմունքներ գրել: Արդեն նախկին զինծառայողի հայրը՝ Հովհաննեսը, «Հրապարակին» պատմում է. «Ասում է՝ ինձ ծեծել են, համոզել են, խփել են, ստիպել են, որ նման ցուցմունքներ տամ: Քննիչն է ստիպել: Ոչ մի ցուցմունք իմ տղայի դեմ չկա: Բոլոր զինծառայողները եկել են ու հրաժարվել իրենց ասածից: Մեկին իբր չափալախել են, մյուսին խփել են, մեկն ազդեցության տակ է եղել: Ու այսքանից հետո դատարանը Սամվելին չի ազատում: Մենք ամեն նիստից առաջ միջնորդում ենք, որ Սամվելի խափանման միջոցը փոխվի, բայց չեն փոխում»:

Ս. Գրիգորյանի շահերը պաշտպանող փաստաբան **Լիպարիտ Սիմոնյանն** արդեն 5 գանգատ է ուղարկել ՄԻԵԴ՝ Ս. Գ.-ին ապօրինի կալանքի տակ պահելու հարցով: Գարնանը՝ ապրիլին, նա ստացել էր ՄԻԵԴ միջանկյալ որոշումը, որով կողմերին հաշտություն են առաջարկել: Առաջարկի ժամկետը լրացել է մայիսի 5-ին: Սա նշանակում է, որ կառավարությունը մերժել է ՄԻԵԴ առաջարկը: Նախկին զինծառայողը շարունակում է մնալ բանտում: Ինչո՞ւ: Անհասկանալի է: Գուցե իրո՞ք Կոռնիձորի դիրքում, որը վաղուց արդեն մերը չէ, ներթափանցման փորձեր են եղել, դիվերսիաներ, որոնք հայկական կողմը պետք է թաքցներ: Սա վարկած է, գրեթե անհավանական, բայց այլ կերպ հնարավոր չէ բացատրել ո՛չ երեք զինծառայողի սպանությունը, ո՛չ էլ մեղադրվողներին այսքան երկար՝ անարդար ձեւով կալանավայրում պահելը:

**Նյութերը՝ Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆԻ**

## Ստանված ընդդիմադիր հայացքներ ուներ

Նոյեմբերի 26-ին Նոր Նորքի Շոպրոնի փողոցում աննախադեպ դաժանությամբ սպանություն է կատարվել: Ասֆալտին ընկած երիտասարդ տղամարդու վրայով մի քանի անգամ մեքենա են վարել, ինչի հետեւանքով ստացած վնասվածքներից նա մահացել է: Գործող անձանց անունները գաղտնի են պահվում: Սպանվածը Բորիս Արզումանյանն է՝ 2 երեխայի հայր, 31 տարեկան: Հայտնի է միայն, որ սպանությանը նախորդել են վիճաբանություն եւ կռիվ: Քննչական կոմիտեից տեղեկացանք, որ քրեական հետապնդում է հարուցվել խուլիգանության եւ սպանության հոդվածներով: «Սպանության, խուլիգանության դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում 2 անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում, որից մեկի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը»,- հայտնեց խոսնակը:

Մեղադրյալը, որը մեքենայի ղեկին է եղել, մեղքը չի ընդունում: Սա թերեւս միակ տեղեկությունն է, որ ստացանք նրա փաստաբանից՝ **Արսեն Սախոյանից**: Նա նաեւ հայտնեց, որ խուլիգանության մեղադրանքը վերաբերում է սպանությանը նախորդած դեպքերին. «Մինչեւ այդ եղել են ինչ-որ դեպքեր, որոնց վերաբերում է վիճաբանությունը: Մոտիվ ասվածը դեռ պարզաբանված չէ: Մնացածը մոտակա ժամանակներս պարզ կլինի»: Չտեսնված դաժանության դեպք է, ինչ է նշանակում՝ մարդու վրայով մեքենան այնքան վարել, մինչեւ մահանա: «Դա խոսակցությունների մակարդակով է: Քրեական վարույթով նման հաստատված տեղեկություն չկա: Երբ որ լինեն համապատասխան ապացույցներ, նոր պարզ կլինի: Այս պահին չկա գոնե մեկ փաստ, որը համապատասխանի այդ հրապարակումներին»,- ասաց փաստաբանը: Նա չասաց, թե քանի հոգի են եղել դեպքի մասնակիցները, անգամ չէր հիշում սպանվածի անունը:

Հանգուցյալը զույգ քույր ուներ, որոնք եւս դժկամությամբ են պատասխանում հարցերին: «Ասելու ոչինչ չկա: Թող մեղավորներն Աստծո առաջ պատասխան տան: Մենք մեղավոր-անմեղ չենք փնտրում, մենք՝ բոլորս ենք մեղավոր, որ հիմա նա մեր կողքին չէ»,- ասաց քույրը՝ նշելով, որ գաղափար չունի, թե ինչու են սպանել եղբորը: Հայտնի է, որ Բորիս Արզումանյանն ընդդիմադիր հայացքներ ուներ: Նրա ֆեյսբուքյան էջում ընդդիմադիրների ակցիաների տեսանյութեր, լուսանկարներ կան՝ Սրբազան պայքարից, իշխանության հասցեին քննադատական նյութեր: Ըստ տեղեկությունների, նա «Հայաստան» դաշինքի պատգամավորի թեկնածու է եղել:

# Մանկապարտեզը բացվեց թերություններով

2025թ. սեպտեմբերի 4-ին Արեն Մկրտչյանը նշանակվեց Լոռու մարզպետ: Այդ օրվանից սկսած, մարզպետն ակտիվ շփվում է բնակիչների հետ, այցելում մանկապարտեզներ եւ դպրոցներ, որոնք կառավարության սուբվենցիոն ծրագրերով վերակառուցվում են: Ամեն այցի ժամանակ նա մի նոր կարգախոսով է հանդես գալիս: Վերջերս մարզպետն այցելել էր Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր համայնք, որտեղ կառավարություն-համայնք համաֆինանսավորմամբ կառուցվել է մանկապարտեզ: Մանկապարտեզի կառուցումը սկսվել է 2023 թվականից, կառուցման աշխատանքների մրցույթը հաղթել էր «Պապ եւ Դավիթ» ՍՊԸ-ն:

Մոտ 2 տարուց ավելի կառուցվող մանկապարտեզը վերջերս շահագործման հանձնվեց: Նոյեմբերի 5-ին՝ մարզպետի առաջին այցի ժամանակ, նախադպրոցական կրթօջախը դեռ վերանորոգման փուլում էր: Մարզպետը 1 շաբաթ ժամանակ տվեց շինարարներին, որպեսզի վերացնեն թերությունները: Նշված ժամանակում մանկապարտեզը բացվեց, Լոռու մարզպետն էլ ներկա էր բացմանը եւ ասել էր, որ 13 ամիս չբացվող հաստատությունը բացվեց 7 օրում: Համայնքի բնակիչներից մեկը մեզ ասաց, որ մանկապարտեզը բացվեց, սակայն թերությունները չեն վերացվել. «Ծրագրում կար, որ մանկապարտեզը պետք է գազիֆիկացվեր շինարարի կողմից, սակայն այսօր այն ջեռուցվում է հոսանքով: Շենքը չունի սեփականության վկայական, չկա ավարտական ակտ, բայց համայնքապետը շինարարների գումարները տվել է»:

Փորձեցինք ՔՊ-ական համայնքապետ Խաչիկ Վարդանյանից ճշտել՝ արդյո՞ք շինարարների կողմից աշխատանքները դեռ չավարտված, ողջ գումարը փոխանցվել է, սակայն համայնքապետը մեր զանգերին չպատասխանեց: Վարդաբլուրի մանկապարտեզի տնօրեն **Մարինե Գրիգորյանը** մեզ հետ զրույցում ասաց, որ նախադպրոցական հիմնարկը գազիֆիկացված չէ. «Մանկապարտեզը չունի սեփականության վկայական, բայց ժամկետ է դրված՝ 15 օրվա մեջ ամեն ինչը կատարվի, ակտը ստանանք, ու գազիֆիկացումը կարվի»: Հարցրինք՝ բացի գազիֆիկացումից, շինարարները պայմանագրով նշված մյուս բոլոր աշխատանքներն ավարտե՞լ են: «Դրսի փայտե ամրացումները նոր են արել, շինարարը պատճառաբանեց, որ ուշ են արել, որպեսզի չփչանար. մինչեւ մանկապարտեզի բացվելը դա արեցին: Հիմա էլի կիսատ բաներ կան, կանեն, նոր արդեն շենքը կհանձնեն մեզ»: Շինարարների գումարը փոխանցվա՞ծ է: «Լրիվ փոխանցումներն արված են, գումարային խնդիր չկա»:

**Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

# ԻՆՉ ԸՆԹԱՑՔ ԿՈՒՆԵՆԱ ԱՌԱՋԻԿԱ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԺՈՂՈՎԸ

ՀԱՅԵ

Ինչպես արդեն հայտնի է, դեկտեմբերի 10-12-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի կունենա Հայ առաքելական եկեղեցու եպիսկոպոսաց ժողով: Պաշտոնական հաղորդագրության մեջ կարդում ենք. «Ի հետեւումն նոյեմբերի 4-7-ի Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովում տեղի ունեցած քննարկումների, դեկտեմբերի 10-12-ը հրավիրվում է եպիսկոպոսաց ժողով՝ քննության առնելու Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու շուրջ վերջին զարգացումները եւ ներեկեղեցական կյանքին առնչվող հարցեր»:

Քաղաքագետ Սուրեն Սուրենյանցը, անդրադառնալով առաջիկայում կայանալիք այս՝ Եպիսկոպոսաց ժողովին, այն համարել է «բեկումնային» ու ներկայացրել երեք հնարավոր սցենար, թե ինչ ընթացք կարող է ունենալ այդ ժողովն ու ինչ արդյունքների կարող է հանգեցնել: Բովանդակային առումով՝ ընդհանուր գծերով համակարծիք լինելով քաղաքագետ Սուրենյանցի ներկայացրածի հետ, սակայն նկատենք, որ, մեր կարծիքով, այն «բեկումնային» չէ, այլ՝ «շատ կարեւոր», քանի որ բեկումնային կարող է դառնալ, օրինակ, Ազգային եկեղեցական ժողովը, որը կարող է հետեւել Եպիսկոպոսաց ժողովին, եթե, իհարկե, որոշվի, որ նման բան պետք է արվի: Բացի այդ, կարծում ենք, որ այն, ամենայն հավանականությամբ, կընթանա «ոսկե միջինի» ճանապարհով, եւ արդյունքում կստացվի մի իրավիճակ, որը կարելի կլինի անվանել «ճգնաժամի կառավարում»:

Սա նշանակում է, որ առաքելական եկեղեցու վերնախավում, հավանաբար, սուր առճակատումներ չեն լինի: Կփորձեն գտնել փոխզիջումային որոշումներ, որոնք կգոհացնեն եկեղեցական վերնախավում եղած բոլոր թեւերին: Ի դեպ, Ռուսաստանն ուսումնասիրող մասնագետների շրջանում կա հայտնի թեզ, թե «Կրեմլը մեկն է, բայց այն ունի բազմաթիվ աշտարակներ»: Թող շատ հանդուգն չդիտվի, սակայն առաքելական եկեղեցու պարագայում կարելի է կիրառել համարժեք մի թեւավոր խոսք. «Մայր տաճարը մեկն է, բայց ունի մի քանի զանգակատուն»: Պատկերավոր ասած՝ կլինեն թեժ քննարկումներ, բանավեճեր եւ այլն, սակայն վերջնական արդյունքում՝ եկեղեցական ներքին կյանքին առնչվող հարցերում կփորձեն գալ ընդհանուր հայտարարի՝ փոխզիջումային տարբերակի, որպեսզի, պատկերավոր ասած, «եւ մայր տաճարի միասնականությունը պահպանվի, եւ բոլոր զանգակատներից հնարավոր լինի լսել ղողանջները»՝ առանց մանրամասների մեջ խորանալու:

Սա չի նշանակի, թե տարիներով կամ տասնամյակներով կուտակված խնդիրները կկարգավորվեն, բայց գոնե կարճաժամկետ հեռանկարում եկեղեցական վերնախավում որոշակի կոնսենսուս կձեւավորվի: Դա, ի դեպ, կարող է լինել «եկեղեցական վերնախավի նոր «ստատուս քվո»»՝ կրկին առանց փակագծեր բացելու: Առավել հետաքրքիրն ու ինտրիգայինը թերեւս այն կլինի, թե Եպիսկոպոսաց ժողովը կկարողանա՞մ գտնել այնպիսի լուծումներ, որոնք կօգնեն հաղթահարելու առաքելական եկեղեցու վերնախավի եւ Հայաստանի գործող քաղաքական մեծամասնության վերնախավի միջեւ հակամարտությունը: Սա կարող է լինել ժողովի օրակարգային ամենաբարդ հարցերից մեկը:

Եվ, ի վերջո, նկատի ունենալով Բագրատ ու Միքայել արքեպիսկոպոսների՝ վերջին օրերին «Հրապարակում» տպագրված հայտարարությունները եւ Մկրտիչ եպիսկոպոսի՝ այդ հայտարարություններին միանալու տեքստը, հարց է առաջանում, թե արդյո՞ք հնարավոր կլինի ապահովել երեք բարձրաստիճան

եկեղեցականի մասնակցությունը Եպիսկոպոսաց ժողովի նիստերին, եւ եթե նրանք չմասնակցեն, նրանց բացակայությամբ կայացված որոշումների հետ կապված՝ իրենց համաձայնությունը կհայտնե՞ն, թե՞ ոչ, եւ եթե հայտնեն, ապա՝ ի՞նչ ձեւով: Ի դեպ, այս հարցից մեծ մասամբ նաեւ կախված կլինի այն, թե արդյոք Հայաստանի իշխանությունները «եկեղեցական թեմատիկայի» հետ կապված հարցերում պատրաստ կլինե՞ն որեւէ զիջման գնալու, թե՞ ասպատակումը շարունակելու են մինչեւ վերջ:

**Սերոբ ՄԱՐՈՒԹՅԱՆ**

# ԲԱՑՈՒՄ ԴՊՐՈՑՆԵՐ ԵՎ ՔՈԼԵՋՆԵՐ ՏՆՕՐԵՆ ՉՈՒՆԵՆ. ՎԻՃԱԿԸ ԲԱՐԴԱՆՈՒՄ Է

2024 թվականին Դիլիջանի պետական եւ բժշկական քոլեջները միավորել են, եւ միացյալ՝ Դիլիջանի պետական բազմագործառութային տնօրենի պաշտոնակատար է նշանակվել մինչեւ քոլեջների միավորումը Դիլիջանի պետական քոլեջի տնօրեն աշխատած Վահագն Հովհաննիսյանը:

2024-ին Դիլիջանի պետական բազմագործառութային քոլեջի տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ է հայտարարվել, սակայն լիազոր մարմնի՝ ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչը մրցույթին չի ներկայացել, մրցույթը չի կայացել: 2025թ. մարտի 4-ին նույն մրցույթը դարձյալ չի կայացել՝ վերստին նախարարության ներկայացուցչի չներկայանալու պատճառով: ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանին տեղեկատվական հարցում եմ արել. «Նոյեմբերի 19-ի դրությամբ ՀՀ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություններից, քոլեջներից քանիսի՞ տնօրենի պաշտոնն է թափուր: Դիլիջանի պետական բազմագործառութային քոլեջի տնօրենի թափուր պաշտոնի համար քանի՞ անգամ է մրցույթ հայտարարվել, եւ ի՞նչ պատճառներով դրանք չեն կայացել»:

ԿԳՄՍ նախարարությունից հարցմանը պատասխանել են. «Նոյեմբերի 19-ի դրությամբ թափուր են 12 նախնական արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենների պաշտոններ: 2025 թվականի ընթացքում «Դիլիջանի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր տեղի համար հայտարարված մրցույթները չեն կայացել ընթացակարգային պատճառներով»: Թե ինչ ընթացակարգային պատճառներ են, ինչու Դիլիջանի բազմագործառութային քոլեջի տնօրենի թափուր պաշտոնի մրցույթները չեն կայանում, նախարարությունից չեն պարզաբանել: Տնօրենների թափուր հաստիքների առումով վիճակն առավել վատ է պետական հանրակրթական դպրոցներում:

Այս տարվա սեպտեմբերի 23-ին ԿԳՄՍ նախարարություն հարցում եմ կատարել պետական հանրակրթական դպրոցների տնօրենների թափուր հաստիքների մասին: Նախարարությունից հայտնել են. «Հանրակրթական ուսումնական հաստատություններում տնօրենի հաստիքը թափուր է 303 դպրոցում. այս դպրոցներում նշանակվել են տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար կամ պարտականությունը կատարող»:

Նոյեմբերին նախարար Ժ. Անդրեասյանը, ԱԺ-ում պատասխանելով պատգամավորների հարցերին, հայտնեց, որ 330 պետական հանրակրթական ուսումնական հաստատությունում տնօրենի հաստիքը թափուր է: Այսինքն, 2 ամսում թափուր հաստիքների քանակն աճել է: Պետական հանրակրթական դպրոցների եւ նախնական արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենների թափուր հաստիքները համալրելը, այդ նպատակով մրցույթները պատշաճ, ժամանակին անցկացնելն ո՞ւմ գործն է, եթե ոչ՝ նախարարության: Իսկ ԿԳՄՍ նախարարությունը, նախարար Ժ. Անդրեասյանը տարիներով թերանում են այդ կարեւոր գործում՝ անգամ դպրոցների տնօրեն չեն կարողանում նշանակել: Տարիներով այդ կարեւոր հաստատություններում ժամանակավոր պաշտոնակատարներ են ղեկավարում, ինչը խոչընդոտում է դպրոցում կայուն կրթական միջավայր ստեղծելուն եւ կրթության գործընթացը կազմակերպելուն:

**Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ**



# ՓԱՇԻՆՅԱՆՆ ԱԿԱՄԱ ՊԱՍՏԵՑ, ԹԵ ՈՐՔԱՆ ԱՆԽՈՅԵԼԻ Է ՎԵՀԱՓԱՌԸ

Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ
lusine@hraparak.am

Սայիսից սանձազերծված, որեւէ արդյունքի չհասած փաշինյանական արշավը՝ Հայաստանյայց առաքելական եկեղեցու եւ անձնապես Գարեգին Երկրորդ Վեհափառի դեմ, մինչ այժմ 3 բովանդակային հանգրվան է անցել: Առաջինը 2025-ի հունիսի 27-ն էր, երբ ուժային հարձակում ձեռնարկվեց Մայր Աթոռի դեմ: Էջմիածին գործուղվեցին ԱԱԾ եւ ՆԳՆ ուժեր, չի բացառվում՝ Վեհարան ներխուժելու առաջադրանքով: Սակայն նրանք նույնիսկ Վեհարանի դարպասներին չհասան: Նրանց դեմ դուրս եկան հոգեւորականությունը եւ ժողովուրդը եւ ոչ միայն ժամեր շարունակ Վեհարանի մուտքերը պատնեշեցին, այլեւ այնքան նախատինք, ամոթանք, նզովք ուղղեցին Փաշինյանի իշխանությանն ու նրա կամակատար ուժայիններին, որ, ի վերջո, ետ քաշվեցին: Աջապահյան Սրբազանն էլ, թերեւս զուր, նրանց կոչին անսաց եւ ներկայացավ Քննչական կոմիտե: Ավելի ճիշտ կլիներ՝ չներկայանար, սակայն այդ դեպքում էլ, ԱԱԾ մեկուսարանում գտնվող Բագրատ Սրբազանը գոտեպնդիչ ընկերակցությունից կզրկվեր:

Հայոց եկեղեցու դեմ Փաշինյանի հերձվածողական արշավի երկրորդ հանգրվանը հոկտեմբերին էր, երբ կարգալույծ արված մի նախկին քահանա՝ էությամբ բանսարկու եւ ստահակ, որոշեց, որ, անկախ իր կարգալույծ արվելուց, կարող է Մայր Աթոռին պատկանող եկեղեցում կեղծ պատարագ մատուցել: Անգամ տեսախցիկների առջեւ զառանցել էր, թե կարող է Հովհաննավանքում 10 հազար հոգի ժողովել: Եկավ կեղծ պատարագի օրը, եւ ոչ թե կարգալույծ ու ողորմելի Ստեփան Ասատրյան կոչեցյալը, այլ նրան հավասարված Նիկոլ Փաշինյանը, վարչական ռեսուրսի գործադրումով անգամ մի քանի հարյուր մարդ չկարողացան հավաքել Հովհաննավանքում: Դրոնային նկարահանումներով 7-8 հարյուր մարդ էր հաշվվել, որի 50-60%-ը՝ ոստիկաններ, լրագրողներ, օպերատորներ: Հաջորդ կեղծ պատարագին նորից Հովհաննավանքում էր Փաշինյանը, բայց հավաքված հանրությունը նախկինի կեսն էլ չկազմեց: Այդպիսով, Փաշինյանի կիրառած երկրորդ բովանդակային-տակտիկական՝ պառակտելու մեթոդը եկեղեցու դեմ չաշխատեց: Փաշինյանի կողքին՝ ընդդեմ եկեղեցու, մի երկու տասնյակ մարդ հազիվ կանգնեց: Ամեն շաբաթ մի լեռան կատարի հասնելն էլ, ինչ է, թե այնտեղի քահանան համաձայնել է պատարագի խոսքից Վեհափառի անունը զեղչել, Փաշինյանի անելանելի վիճակի վիզուալ արձանագրումն է:

Երրորդ հանգրվանը՝ եկեղեցու դեմ Փաշինյանի թշնամական ընթացքում, ամենից երկար հյուսված եւ նենգամիտ տակտիկայի երեւան գալն էր՝ անցյալ շաբաթ, երբ 8 եպիսկոպոսների ստորագրությամբ տարածվեցին ակնհայտորեն ՔՊ-ում գրված կամ խմբագրված հայտարարություններ, իսկ դրվագի գագաթնակետը՝ եպիսկոպոսների՝ կառավարության շենք գնալն ու Փաշինյանի հետ հանդիպելը, որից հետո ամբողջ երկիրը սկսեց հայհոյել ու վիրավորել նրանց: Ավելի իրազեկները սկսեցին այդ մի քանի եպիսկոպոսի դեմ վարկաբեկիչ, մերկացնող, հանցագործությունների մեջ ամբաստանող տեղեկություններ լցնել համացանց: Որը՝ իրական, որը՝ հորինված, բայց, մեծ հաշվով, մանրամասները կամ հանգամանքները չեն էականը, այլ Վեհափառի հանդեպ անհնազանդություն դրսեւորած եւ Փաշինյանի հետ գործակցության գնացած եպիսկոպոսների հանրային պախարակումն ու քարկոծումը: Այդ մի քանի եպիսկոպոսների հետ կատարվածը ցույց տվեց, որ հանրության աչքում Փաշինյանն ուղղակի բորոտ է, որի հետ գործակցելը միայն բարոյական, հոգեւոր, քաղաքական մահ է բերում:

Ընդսմին, ոչ մի գիտակից մարդ առանձնապես չի կասկածի, որ եպիսկոպոսները բավականաչափ հեռատես եւ խորաթափանց մարդիկ են ու դժվար թե առանց ճնշման Փաշինյանի հետ գործակցելու բարոյական ինքնասպանությանը գնային: Իսկ Փաշինյանն ի՞նչ ճնշման միջոց կարող է ունենալ եպիսկոպոսների դեմ: Պարզ է՝ միայն եւ միայն компромат, վարկաբեկիչ տեղեկություններ: Օրերս մեկի հետ զրուցում էի, ասացի՝ Փաշինյանի հետ հանդիպելու արդյունքում էլ ընդդիմադիր ճամբարից եպիսկոպոսների մասին կոմպրոմատներ հանրայնացրին, վերջնահաշվում նույն արդյունքը եղավ՝ եպիսկոպոսները ոչինչ չշահեցին: Զրուցակիցս չհամաձայնեց՝ Փաշինյանը կարող է նաեւ քրեական հետապնդման ենթարկել, ընդդիմադիրները դրա հնարավորությունը չունեն: Համոզիչ փաստարկ է:

Կարեւորն այստեղ, սակայն, ՔՊական թղթերի ներքո ստորագրած եպիսկոպոսները չեն, ոչ էլ նրանց ճակատագիրը, այլ՝ կոմպրոմատի գործոնը: Պատկերացրեք միայն՝ Նիկոլ Փաշինյանը ողջ իրավապահ համակարգը գործի դնելով՝ կես տարում կարողացել է Հայաստանյայց առաքելական եկեղեցու հարյուրավոր, եթե ոչ աշխարհասփյուռ հազարավոր սպասավորներից ընդամենը մեկ տասնյակի դեմ կոմպրոմատ գտնել եւ շանտաժով գործակցություն պարտադրել: Դա խոսում է ընդհանրության մեջ Հայաստանյայց առաքելական եկեղեցու սպասավորների նախանձելի բարեպաշտության, օրինավորության եւ անխոցելիության մասին: Իսկ որ ամենից կարեւորն է, դա խոսում է Վեհափառի անխոցելիության մասին: Եթե Փաշինյանը հասել է այնտեղ, որ մերձբալթյան երկրների մի եպիսկոպոսով կամ Մայր Աթոռի մի տեսուչով է հետաքրքրվել, ապա որքան ավելի ժամանակ, ջանք ու կիրք է վատնել, որ Վեհափառի դեմ մի, թեկուզ թույլ կոմպրոմատ ձեռք գցի, ու չի կարողացել: 6-7 ամիս անդադրում ինքնակոտոր լինելով՝ չի կարողացել:

Դա Փաշինյանի անարգ վարքի արժանի պատիժն է ու տապալումը: Ինքնաբերաբար՝ նաեւ Գարեգին Երկրորդ Վեհափառի բարձրացումը: Ի տես աշխարհի փաստվեց, որ Թադեի Աթոռի գահակալն աներեր է եւ անխոցելի, որքան էլ Փաշինյանը նման իրականությունից խենթանա ու պատեպատ զարնվի: Անհրաժեշտ է, որ հաջորդ շաբաթ Սուրբ Էջմիածնում գումարվող Եպիսկոպոսաց ժողովը Նիկոլ Փաշինյանին եւ իր սերունդներին ուղիղ բանադրի ու նզովի: Այս ստոր ու անարգ արշավը միայն դրան է արժանի:

**ՀԳ.** *Եկեղեցու թեմայի պարագծում մի դիտարկում էլ՝ Սուրբ Սարգիս եկեղեցի պատարագի գնացած փաշինյանական շրջիկ խմբակի մասին: ՔՊ-ական վերնախավում այնքան են հեռու քրիստոնեությունից, որ երեւի չգիտեն՝ քրիստոնյաները հազարամյակներով կիրակնօրյա պատարագների գնացել են եւ գնում են լավագույն հանդերձանքով, որովհետեւ ջանում են լինել Աստծո հետ հաղորդվելու տոնին պատշաճող կերպարի, արտաքինի, հոգեվիճակի մեջ: Ոչ թե գնում են դեկոլտեով կամ քրջուփալասով, ինչպես կիջնեն «հայթ». մեկը՝ շղարշի փոխարեն գլխին շարֆ փաթաթած, մյուսը՝ գույնզգույն водолазка-ով ու ջինսով, երրորդը՝ տաբատի, կուրտկայի մեջ մտած, ինչպես փողոցի կանաչի վաճառող...*

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 4.12.2025թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

# ԲԱՐԵՓՈԽՈ՞ՒՄ, ԹԵ՞ ՉԱՐԵՓՈԽՈՒՄ

Գրիգոր ԷՄԻՆ-ՏԵՐՅԱՆ

Հայաստանի անկախացումից հետո քաղաքացիների կյանքը սկսեց օր-օրի վատթարանալ, այնքան, որ ի հայտ եկան բազմաթիվ, մինչ այդ աներեւակայելի թվացող իրողություններ. հայազգի մուրացկաններ, աղբամաններում ուտելիք փնտրողներ, որոնք այնքան սոված էին, որ հայտնաբերելով հացի կտորը, ապշած անցորդների աչքի առջեւ հենց տեղում ագահորեն այն ուտում էին, 10 դոլարանոց հայ մարմնավաճառներ, որոնք ստիպված էին դիմել այդ քայլին, որպեսզի կերակրեին իրենց երեխաներին:

Հետեւելով Ջորջ Օրուելի նկարագրած երկրի օրինակին, որպեսզի մարդկանց ենթագիտակցության մեջ ներմուծեն միտքը, թե իրենց ռեֆորմները լավն են ու անսխալ, մեր ղեկավարները դրանք սկսեցին անվանել «բարեփոխումներ, բարենորոգումներ»: Դրանով նրանք հասկացնել էին տալիս, թե, իբր, իրենց վարած քաղաքականությունն ու ներմուծած օրենքները լավն են ու բարի, ինչը 1990-ականներին, երբ ընդունվում էին մեկը մյուսից սխալ ու հակաժողովրդական օրենքներ, շատ էր նյարդայնացնում:

Օգտվելով այն հանգամանքից, որ «Ազգ» օրաթերթում աշխատում էի որպես միջազգային ինֆորմացիայի եւ լրատվության պատասխանատու, ընդվզեցի եւ ի հակակշիռ այդ նոր տերմինի, շրջանառության մեջ դրեցի «չարեփոխում» բառը: Առաջին անգամ դա իրականացրի 1995 թվականի դեկտեմբերի 1-ին տպագրված «Աշխատանքի միջազգային կազմակերպությունը դեմ է աշխատավարձերի «սառեցմանը»» հոդվածում: Այլ հրապարակումներում այդ նոր բառը մի քանի անգամ օգտագործելուց հետո, երջանկահիշատակ Կարեն Դեմիրճյանի շնորհիվ, որին դուր էր եկել այդ տերմինը, այն դարձավ պոպուլյար:

Ցավոք, նրա մահից հետո այդ եզրույթը մոռացվեց: Վերականգնվեց եւ մշտապես սկսեց կիրառվել «բարեփոխումը»՝ մոռացության տալով «չարեփոխումը»: Մինչդեռ, պետք է իրերն անվանել իրենց անուններով: Կամ պետք է օգտագործել «ռեֆորմ» բառը, եւ թող քաղաքացին ինքը որոշի՝ դա բարեփոխո՞ւմ է, թե՞ չարեփոխում, կամ էլ, բացի, թերեւս, նախընտրական ժամանակահատվածներից, երբ լինում են նաեւ դրական որոշումներ, միշտ օգտագործել «չարեփոխում» բառը: Չէ՞ որ մեր երկրի ռեֆորմների եւ օրենքների մեծամասնությունն այնպիսին է, որ կոչված է սպասարկելու փոքրաթիվ հարուստների շահերը՝ ի հաշիվ մեծաթիվ չունեւորների եւ միջին խավի ներկայացուցիչների: Դրա օրինակները բազմաթիվ են:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am